Կույս Մարիամ. Ժամանակավոր խաղաղություն աշխարհում, եթե խավարի հոգիները դարձի գան (Աղոթքի խաչակրաց արշավանք 17)

Կիրակի, 1 հունվարի, 2012թ, ցերեկվա ժ 03:00

Զավակս, ժամանակը մոտ է, **բայց Իմ զավակները պետք է համբերություն ցույց տան:** Ամեն ինչ կլինի Իմ Հոր Սուրբ Կամքին համապատասխան:

Զավակներս, դուք պետք է հասկանաք, որ ձեր աշխարհում չարի ուժերը սպառնում են Հայր Աստծո հանդեպ ունեցած ձեր հավատին: Այդ չար ուժերը չեն հաղթի, քանի որ նրանք զորություն չունեն Իմ Երկնավոր Հոր վրա: Սակայն նրանք կչարչարեն իրենց ընկեր եղբայրներին և քույրերին սպանության, պատերազմի և վերահսկողության միջոցով:

Աղոթեք, որ այդ խավար հոգիները տեսնեն շուտով Իմ Որդու լույսը: Եթե նրանք տեսնեն և դարձի գան Նախազգուշացման ընթացքում, այդ դեպքում **երկրի վրա ժամանակավոր խաղաղություն կլինի:**

Իմ Որդին՝ Հիսուս Քրիստոսը, ում պետք է վստահեն բոլոր հոգիները փրկության համար, անհամբեր է բերելու համար մարդկությանը Իր Մեծ Գթասրտության ընծան:

Սրտանց աղոթեք, զավակներս, այդ խավար հոգիների փրկության համար, ովքեր հնարավոր է չգոյատևեն Նախազգուշացման ընթացքում:

Այդ խեղճ հոգիները սարսափի կմատնվեն ոչ միայն իրենց մեղքերին ականատես լինելու ընթացքում, այլև երբ տեսնեն այն խավարը, որի մեջ իրենք գտնվում են: Այդ խավարն այնքան է պարուրել նրանց հոգիները, որ Իմ Որդու գթասրտության լույսը նրանց կստիպի թույլ և անուժ զգալ:

Շատերը չափազանց թույլ կլինեն ընկալելու համար այն գթասրտությունը, որն Իմ Որդին կառաջարկի նրանց:

Աղոթեք այդ հոգիների համար, Ես կոչ եմ անում ձեզ: **Իմ Որդին մտադիր է առաջին հերթին փրկել այդ հոգիներին:** Նա ավելի շատ աղոթքների կարիք ունի, զավակներս: Դուք պետք է գթասրտություն աղերսեք այդ խավար հոգիների համար:

Զավակս, խնդրիր Իմ զավակներին, որ աղոթքի խաչակրաց այս արշավանքը նվիրաբերեն Ինձ (17) **Փրկության Մորը.**

Ով Մարիամի Անապական Միրտ

Մայր Փրկության և Միջնորդուհի ամեն շնորհի

Դու, որ կմասնակցես Սատանայի չարությունից

Մարդկության փրկությանը,

Աղոթիր մեզ համար:

Մայր Փրկության, աղոթիր, որ բոլոր հոգիները կարողանան փրկվել

և ընդունել Քո Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի

կողմից ցույց տրվող սերն ու գթասրտությունը, ով մեկ անգամ ևս գալիս է փրկելու

համար մարդկությանը և մեզ հավիտենական փրկության հնարավորությունը տալու: Ամեն

Ձեր Սիրող Մայր

Մայր Փրկության

Միայն մեկ ճշմարտություն կա, մեկ Լույս: Մնացած ամեն ինչ սուտ է

Կիրակի, 1 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 05:30

Իմ սիրելի աղջիկ, իմացիր, որ ինչքան էլ դժվար է այս առաքելությունը, Ես միշտ քեզ ուղղություն կտամ:

Իմ ձայնը միշտ խրախուսում է քեզ: Իմ հոգին ազդում է քո սրտի վրա այնպես, որ դու անուժ ես նրա դեմ: Իմ սերն այնքան պարուրող է, որ դու չես կարող մեջքդ շրջել դեպի Ինձ կամ ժխտել Ինձ: Սակայն գտնում ես, որ սայթաքում ես ճանապարհին:

Երբ փորձում ես վերլուծել Իմ Խոսքը, կտեսնես որ չես կարող դա հաջողությամբ անել: **Ոչ մի չափի վերլուծություն չի կարող փոխել այն ճշմարտությունը, որը Ես եմ ասում:**

Ոչ ոք, ներառյալ դու, աղջիկս, իրավասու չէ **շրջել Իմ Սուրբ Խոսքի իմաստը, որպեսզի այն ավելի ընդունելի դառնա ձեր աչքում:**

Սա վերաբերում է Սուրբ Աստվածաշնչում պարունակվող Իմ խոսքին, և այս պատգամներում պարունակվող Իմ խոսքին:

Ավելի շատ վստահիր Ինձ, ազջիկս: Խնդրիր Իմ զավակներին և Իմ բոլոր սիրելի հետևորդներին ամբողջապես Ինձ վստահել:

Ես երբեք չեմ թողնի մարդկությունը կործանվի: Ես երբեք Իմ մեջքը չեմ շրջի Իմ փայփայած զավակների աղերսների հանդեպ: Ես միշտ կարձագանքեմ խեղճ հոգիներին, ովքեր խնդրում են Իմ Գթասրտությունը:

Սակայն Ես երբեք չեմ խոսի Իմ զավակների հետ այնպես, որպեսզի հարմարվեմ նրանց կարիքներին և տամ նրանց այն, ինչ նրանք են ցանկանում լսել:

Ճշմարատությունը պետք է ասվի: Իմ սուրբ խոսքը երբեք չպետք է նոսրացվի (ամլացվի), ոչ էլ ճշմարտությունը՝ կեղծվի:

Իմ սուրբ խոսքը երբեք չպետք է փոխվի, հարմարեցվի կամ շրջվի, այնպես որ այն դառնա սուտ:

Իմացեք, որ Իմ արդարադատության ժամանակը մոտ է: Հասկացեք, որ Իմ գթասրտությունը մեծ է, սակայն այն չարությունը, որը Ես տեսնում եմ ձեր աշխարհում, Ինձ գարշանք է պատճառում:

Այդ չարությունը նույնիսկ արդարացվում է նրանց կողմից, ովքեր գիտեն Իմ խոսքը և հռչակում են, թե ճանաչում են Ինձ:

Նրանք դարեր շարունակ շրջել են Իմ ուսուցումները, հարմարեցնելու համար դրանք իրենց ագահությանը, քմահաճույքին, հպարտությանը և ընչաքաղցությանը:

Որքան է Իմ սիրտը կոտրվում տեսնելով Իմ առջև ցուցադրվող անառակության գործերը, և ականատես լինելով, թե ինչպես են Իմ զավակները հիմարացվում՝ հավատալով, թե դրանք ընդունելի են Իմ աչքում:

Արթնացեք ճշմարտության հանդեպ: Իմ մեծ գթասրտությունը մատչելի է յուրաքանչյուր հոգու համար Նախազգուշացման ընթացքում:

Բայց զգուշացեք, այն քրիստոնյաները, ովքեր հավատացած են, թե Իմ ուսուցումների շրջված ճշմարտությունը ընդունելի կլինի Իմ աչքում, կցնցվեն Նախազգուշացման ընթացքում: Նրանք կդիմադրեն ճշմարտությանը, երբ Ես բացահայտեմ թե ինչպես են իրենց մեղքերը մեծապես վիրավորում Ինձ:

Ես կոչ եմ անում այդ մարդկանց ընդունել, որ Ես ճշմարտությունն եմ և լույսը: Միայն մեկ ճշմարտութուն կա: Մեկ լույս: Մնացած ամեն ինչ սուտ է:

Զննեք ձեր գիտակցությունը, զավակներս, անկեղծորեն, նախքան Նախազգուշացումը տեղի կունենա: Սովորեք ճանաչել ճշմարտությունը նախքան կգաք Իմ առջև: Քանի որ միայն և միայն այդ դեպքում ձեր տառապանքն ավելի քիչ կլինի:

Ձեր ուսուցիչ և փրկիչ

Ողջ մարդկության Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ. Իմ Անապական Սրտի հաղթանակի ժամանակը հեռու չէ

Երկուշաբթի, 2 հունվարի, 2012թ, ցերեկվա ժ 12:00

Զավակս, **Իմ Անապական Սրտի հաղթանակի ժամանակը հեռու չէ:**

Մինչ Սատանայի զորությունը նվազում է, նա ավելի անողոք է դառնում հոգիներ հետապնդելու մեջ:

Նույնիսկ ուժեղ հոգիների համար այս ժամանակահատվածը դժվար կլինի, քանի որ նրանց հավատքը ծայրահեղ փորձության կենթարկվի:

Զավակս, երբ Իմ զավակների հավատքը փորձության է ենթարկվում այսպիսի դաժան ձևով, **նրանք չպետք է սասանվեն, այլ՝ զգոն մնան:** Նրանք պետք է սրտով մաքուր մնան միշտ:

Նրանք պետք է նաև լուռ մնան, երբ իրենց հոգիների մեջ նախանձ գտնեն: Նախանձն ու խանդը տանում են դեպի ատելություն: Ընտրյալ հոգիների հանդեպ նախանձն ավելանում է նույնիսկ նրանց մեջ, ովքեր սիրում են Իմ Որդուն:

Զավակներս, դուք երբեք չպետք է տեղի տաք այդ գայթակղությանը, որը դրվում է ձեր սրտերի մեջ չարի կողմից:

Հիմա աշխարհում մի լայնատարած նախանձ կտարածվի Իմ բոլոր տեսանողների և սուրբ պատգամատարների հանդեպ: Սա կանխասացվել է, քանի որ նրանք վերջին ժամանակների բազմաթիվ սրբերից են:

Նրանց բաժինը ծանր է և նրանք ուժգին կերպով կտառապեն իրենց տրված առաջադրանքների պատճառով:

Զավակս, Ես կոչ եմ անում բոլոր նրանց, ովքեր պատվում են Ինձ՝ իրենց Օրհնյալ Մորը, **որ աղոթեն Ինձ տեսանողների և վերջին ժամանակների մարգարեների պաշտպանության համար:**

Նրանք ձեր աղոթքների կարիքն ունեն: Եթե կասկածներ ունեք այդ հոգիների համար, ովքեր ընտրվել են աշխարհին ճշմարտությունը հայտնելու համար, ապա **աղոթեք նրանց համար, անկախ ամեն ինչից:**

Դուք բոլորդ Աստծո արարչությունն եք: Դուք պետք է սեր ցույց տաք միմյանց հանդեպ: **Հոչակեք Իմ Որդու Սուրբ Անունը, սակայն երբեք դա մի արեք Աստծո մեկ այլ արարածին վիրավորելու հաշվին:**

Վիրավորանքները սիրուց չեն բխում: Նրանք գալիս են խաբեբայից, ում ատելությունը մարդկության հանդեպ սահմաններ չի ճանաչում:

Եթե սիրում եք Իմ Որդուն և **մեղավորություն եք տեսնում մեկ այլ հոգու մեջ, ապա պետք է կնքեք ձեր շրթունքները:**

Երբեք մի չարախոսեք ուրիշին Իմ Որդու անվամբ:

Իմ սիրտը ասես խոցվում է սրով, երբ Ես տեսնում են Ինձ՝ Աստծո Սուրբ Մորը նվիրաբերված հոգիներին, ովքեր վիրավորանքներ են հեղում այն տեսանողների վրա, որոնք ընրվել են օգնելու հոգիներ փրկելու համար:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք այսօր աշխարհում Հայր Աստծո կողմից ընտրված տեսանողների համար:

Հավատացած եղեք, որ **նրանք են, որ կրում են ամենամեծ վիրավորանքները, ովքեր խոսում են Իմ Որդու անվամբ:**

Նրանք, ում պատգամները կատաղի կերպով հարձակման են ենթարկվում, մերժվում կամ մասնատվում, սովորաբար նրանք ընտրյալ հոգիներն են:

Նրանք չարի առաջնահերթ թիրախներն են, ով ուրիշների միջոցով կծաղրի հավատացողներին, որ մերժեն այդ տեսանողներին:

Հիշեք, որ այս պատգամները ներկայացնում են Իմ Որդուն և Նրա Սուրբ Խոսքը:

Մերժեք ճշմարիտ տեսանողին, և դուք կմերժեք Իմ թանկագին Որդու խոսքը:

Միշտ աղոթեք զանազանության համար: Այնուամենայնիվ, դուք երբեք չպետք է հրապարակայնորեն վիրավորեք դժոխքի կրակներից հոգիներ փրկելու նպատակով մարդկությանը տրվող այս աստվածային պատգամները:

Խաչընդոտեք այդ տեսանողների աշխատանքին, և դուք կխոչընդոտեք հոգիների փրկությանը:

Ձեր սիրող Մայր

Երկնի Թագուհի

Մայր Փրկության

Հայր Աստված. Երկու միլիարդ հոգի դարձի կգան այս պատգամների արդյունքում

Երեքշաբթի, 3 հունվարի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Աղջիկս, այսօրվա տեսիլքի ընծան, երբ Ես բացահայտեցի քեզ Իմ Որդու դեմքը և Ինձ՝ քո Երկնավոր Հորը, հազվագյուտ է:

Դու օրհնյալ ես, որ քեզ տրվել է այդ արտակարդ ընծան Երկնքից: Սա անհրաժեշտ էր քեզ ավելի ուժեղ դարձնելու համար: Քո տառապանքը կթեթևանա հիմա, և դու ավելի ուժեղ կդառնաս, քան նախկինում էիր:

Երբեք չվախենաս այս աշխատանքից, քանի որ մինչև հիմա պետք է իմացած լինեիր, որ երկրի վրա ամբողջ զորությունը Իմ Երկնավոր ձեռքերում է: **Ոչ մեկը իշխանություն չունի Հոր վրա:** Նույնիսկ խաբեբան չի կարող միջամտել կամ փոխել մարդկության հանդեպ Իմ Երկնավոր Պլանը:

Երկինքն ուրախանում է այն դարձի համար, որն սկսվել է Իմ այս պատգամներից: **Հիմա մոտ երկու միլիարդ հոգիներ դարձի կգան որպես ուղղակի արդյունք այս աստվածային պատգամների:**

Ոչ մի մարդ չի կանգնեցնի այս աշխատանքը: Նրանք կփորձեն այդ, բայց անօգուտ:

Իմ աստվածային պաշտպանությունը ծածկում է բոլոր այն հոգիներին, ովքեր հռչակում են հավիտենական փրկության ճշմարտությունը:

Երբեք տեղի չտաք, զավակներս, անկախ այն բանից, թե որքան դժվարին կդառնա ձեր տառապանքը: Տառապանքը, երբեք չմոռանաք, ձեզ ավելի է մոտեցնում Իմ Երկնային Թագավորությանը:

Դուք, զավակներս, կուրախանաք, երբ զգաք այն շնորհները, որոնք հեղվում են ձեզ վրա Իմ Որդու միջոցով:

Զգոն մնացեք: Շարունակեք աղոթել բոլոր հոգիների համար և ոչ մի րոպե մի կասկածեք, որ այդ Ես եմ՝ ձեր Հավիտենական Հայրը, ով բերում է ձեզ մտքի, մարմնի և հոգու խաղաղություն այս պատգամների միջոցով:

Վերաբերվեք այս պատգամներին որպես սրբազան: Նրանք եղել են և միշտ կմնան համապատասխան Իմ խոսքին տրված մարդկանց ժամանակի սկզբից ի վեր: Նրանք այնպես կբոցավառեն ձեր հոգու բոցը, որ ձեզ համար դժվար կլինի անտեսել:

Թույլ տվեք որ Իմ Հոգին հասնի ձեզ և հանգստացեք: Միայն այդ դեպքում Ես կարող եմ դիպչել ձեր հոգուն որ ճանաչման կայծը վառի ձեր սիրտը:

Ես կոչ եմ անում ձեզ շրջվել դեպի Ինձ, որպեսզի կարողանամ գրկել ձեզ այնպես, ինչպես միայն Հայրը կարող է գրկել:

Թույլ տվեք Ինձ առաջարկել ձեզ Իմ պաշտպանությունը և շնորհները որ ձեզ բավականին ուժեղ դարձնեմ կռվելու համար Իմ բանակում՝ ձեր աշխարհի չարի դեմ:

Իմ բանակը կբերի այն խաղաղությունը, որը ցանկանում եք, և այն սերը, որի կարիքն ունեք ձեր ծարավը հագեցնելու համար:

Գնացեք խաղաղությամբ, զավակներս, գիտենալով, որ ճշմարտությունն է պարունակվում այս պատգամների մեջ, որոնք Ես վավերացրել եմ ողջ աշխարհի համար:

Դուք, եթե սրտով մաքուր և խոնարհ եք, կճանաչեք Իմ սերը: **Դարձեք փոքր, ինչպես երեխա,** Իմ աչքում: Միայն այդ դեպքում Ես ձեզ վեր կբարձրացնեմ ինչպես հրեշտակի Իմ Ստորակարգության (հիերարխիա) մեջ, երբ ժամանակը գա:

Գնա խաղաղությամբ: Հանգստացրու քո հոգնած գլուխն Իմ ուսի վրա, և **Ես կբերեմ քեզ այն հարմարավետությունն ու սփոփանքը, որին տենչում ես:**

Ես սիրում եմ ձեզ, զավակներս: Ձեզնից յուրաքանչյուրին:

Ես ուրախանում եմ, քանի որ երբ մեր Սուրբ Ընտանիքի միավորման օրը գա, ողջ երկինքը կերգի գովաբանությամբ և փառքով հավիտյան:

Հայր Աստված

Ծանոթություն. Հղումը 2 միլիարդ հոգու – Մարիա Աստվածային Գթասրտությունը ցանկանում է հայտնել, որ ավելի վաղ ստացած անձնական պատգամի մեջ, ստացված Հայր Աստծո կողմից, իրեն ասվել է, որ <<Երկու միլիարդով ավել հոգիներ, ովքեր այլ կերպ չէին փրկվի, կփրկվեն այս պատգամների շնորհիվ>>: Շատերը մեկնաբանել են վերոնշյալ պատգամն այնպես, որ **միայն** երկու միլիարդ հոգի կփրկվի աշխարհում, որը սխալ է: Կփրկվեն ավելին: Երկու միլիարդը կլինի **ի հավելում** փրկվածների:

Շատ շուտով Ես Ինձ հայտնի կդարձնեմ

Չորեքշաբթի, 4 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 06:15

Աղջիկս, շատ շուտով Ես Ինձ հայտնի կդարձնեմ:

Նախապատրաստություններն ավարտված են, բայց Ես ավելի շատ աղոթքների կարիք ունեմ նրանց համար, ովքեր կմեռնեն թշվառ մահով մահացու մեղքի մեջ Նախազգուշացման ընթացքում:

Ես կոչ եմ անում Իմ հետևորդներին աղոթել, աղոթել, աղոթել նրանց խեղճ հոգիների համար:

Ես սիրում եմ ձեզ, Իմ սիրելի հետևորդներ: Որքան եմ Ես հրճվում այն սիրուց և սրտի մաքրությունից, որը տեսնում եմ ձեր մեջ: Դուք Ինձ այնքան շատ սփոփանք եք բերում և թեթևացնում եք Իմ տառապանքը: **Ձեր նվիրվածությունը բալասանի պես է Իմ թարախակալող վերքերի վրա:**

Աշխարհում, ճիշտ այնպես, ինչպես Ինձ են շատերը վանում և մերժում, ձեր հավատարմությունն է, Իմ սիրելի հետևորդներ, որ Ինձ մեծ ուրախություն է բերում:

Իմ տառապանքը պայմանավորված է աշխարհում անաստվածության մակարդակից: Այս աշխարհի, որը պատվում է փառասիրությունը, սեփական անձի փառքը և կեղծ կուռքերի:

Իմ անունը կարևոր չի համարվում: Իմ ձայնը չի լսվում իրենք իրենցով տարվածների ձայների ժխորից վեր:

Որքան բարձրաձայն են նրանք բղավում և պարծենում իրենց աշխարհիկ ունեցվածքով: Բայց **Իմ սիրելի հետևորդների շշունջներն են,** որ թույլ են տալիս Ինձ խոսել այնպես, որ Իմ ձայնը լսվի:

Դուք, Իմ հետևորդներ, հիմա Ինձ հետ միության մեջ եք այնպիսի ձևով, որ կզարմացնի ձեզ:

Գնա, աղջիկս, և ասա Իմ սիրելի հետևորդներին, որ Ես սիրում եմ իրենց և որ Իմ շնորհները բավարար չափով կուժեղանեն նրանց հռչակելու համար Իմ անունը մի աշխարհի, որը կարիք ունի լսելու ճշմարտությունը, որպեսզի հոգիները կարողանան փրկվել:

Ձեր սիրող Հիսուս

Միջուկային պատերազմի փորձեր Միջին Արևելքում

Չորեքշաբթի, 4 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 07:20

(Հատված մի պատգամից, որի մեծ մասն անձնական պատգամ է տրված Մարիա Աստվածային Գթասրտությանը):

Իմ սիրելի աղջիկ, ուշ դարձրու Ինձ հիմա, մինչ Ես տեղեկացնում եմ աշխարհին, որ ազգերը կփորձեն սկսել ոչնչացնել միմյանց արևելքում:

Շատ աղոթք է անհրաժեշտ վստահանալու որ այս միջուկային պատերազմը և մյուս վայրագությունները կասեցվեն: Երբեք մի մոռացեք, որ աղոթքը հզոր է և կարող է մեղմացնել շատ չար իրադարձություններ:

Ես պետք է հիշեցնեմ ձեզ Իմ ցանկության մասին, որ աղոթքներ ասվեն հոգիների փրկության համար:

Ես ավելի շատ հոգիների կարիք ունեմ, աղջիկս, հատկապես նրանց, ովքեր մեռնելու են Նախազգուշացման ժամանակ:

Մինչև այժմ պետք է իմանայիր, **որ սա Իմ ամենամեծ ցանկությունն է**, և Իմ հեևորդների աղոթքներն են, որ կարող են բերել այդ հոգիների փրկությունը:

Ես կոչ եմ անում աղոթախմբերին ամենուրեք, որ հիմա սրտանց աղոթեն այդպիսի հոգիների համար:

Աստված՝ Իմ Հավիտենական Հայրը, համապատասխանաբար կպատասխանի ձեր խնդրանքներին և փրկապարան կառաջարկի այդ խեղճ հոգիներին:

Դու հոգնած ես հիմա, աղջիկս: Գնա խաղաղությամբ: Հանգստացիր:

Ձեր Հիսուս

Դատեք և հայհոյեք ուրիշին Իմ անվամբ, և դուք կթքեք Իմ դեմքին

Շաբաթ, 7 հունվարի, 2012թ, ցերեկվա ժ 03:40

Իմ սիրելի աղջիկ, մինչ Իմ հետևորդները շարունակում են պայքարել միմյանց հետ աշխարհին ուղղված Իմ այս սուրբ պատգամների վավերական լինելու մասին, **ավելի ու ավելի շատ հոգիներ են շարունակում բաժանվել Ինձնից:**

Ձեզանից նրանց, ովքեր հայտարարում են, թե ճանաչում են Ինձ, համոզվեք, որ Իմ հանդեպ ձեր սերը պետք է ապացուցվի:

Բավական չէ ասել, որ սիրում եք Ինձ: Դուք պետք է առաջին հերթին սիրեք ձեր ընկերոջը:

Ինչպե՞ս եք սիրում ձեր ընկերոջը: Նրանց հետ սիրով և հարգանքով վերաբերվելով, անկախ նրանից, թե ինչպես են նրանք ձեզ վիրավորում:

Վայ ձեզնից նրանց, ովքեր զրպարտում են ուրիշին Իմ անվամբ: Դուք կորած եք Ինձ համար: Առանց ձեր սրտում խոնարհության, երբ դուք դատում կամ հայհոյում եք ուրիշին Իմ անվամբ, **դուք թքում եք Իմ դեմքին:**

Հիշեք, դուք Ինձ չեք ներկայացնում, երբ հայհոյում եք և հանրորեն ատելություն ցույց տալիս ուրիշների հանդեպ:

Սակայն շատերը, **ովքեր իրենց պատկերացնում են որպես Իմ սուրբ առաքյալներ, ընկնում են այս թակարդը,** որը նրանց համար դրվում է Սատանայի կողմից նրանց սխալի մեջ գցելու համար:

Հեռու գնացեք, Ես ասում եմ: Աղոթեք ներում ստանալու համար: Շատ ավելի լավ կլիներ, որ ավելի շատ ժամանակ անցկացնեիք աղոթքի մեջ՝ ձեր եղբայրների ու քույրերի փրկության համար:

Ոհ, որքան եմ Ես ցանկանում, որ այն հետևորդները, ովքեր ասում են, թե գալիս են Իմ անվամբ, **վարվեին այնպես, ինչպես Ես եմ նրանց ասել:** Որքան են նրանք վիրավորում այն խեղճ հոգիներին, ովքեր անում են իրենց կարողացածը Իմ աչքում խոնարհ մնալու համար:

Զանազանման մեծ անհրաժեշտություն կա Իմ աստվածային շրթունքներից եկող այս Սուրբ պատգամների առնչությամբ, որոնք այս վերջին ժամանակներում տրվող այդպիսի պատգամներից վերջինն են:

Երբեք մի ստեղծեք ձեր սեփական կարծիքը՝ հիմնված Իմ և Իմ ուսուցումների վերաբերյալ խեղաթյուրված պատկերացումների վրա:

Ես ամենից առաջ Գթասրտության Աստված եմ առաջին հերթին, նախքան կգամ որպես Դատավոր:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ, բայց այսօր Ես տառապում եմ նույն ցավով, ինչ ժամանակին զգացել եմ Գեթսեմանիի պուրակում: Ես երբեք չեմ հանգստանա, մինչև ձեզ չփրկեմ չարից:

Ով էլ որ ասում է, թե Ես չեմ տառապում, Ինձ չի ճանաչում:

Ով էլ որ կարծում է, թե իրեն իշխանություն է տրված դատել մեկ ուրիշին Իմ անվամբ, Ինձ ճշմարիտ չի սիրում: Դրա փոխարեն նա սիրում է ինքն իրեն և լցոնված է հպարտությամբ:

Ով էլ որ իր մատն է թափահարում ուրիշների վրա, որպեսզի սատիպի նրանց Ինձ հավատալ, նա նույնպես սխալ է հասկացել սիրո, խոնարհության և համբերության մասին Իմ ուսուցումները:

Շատ լավ մտադրություն ունեցող քրիստոնյաներ հավատացած են, թե իրենց դերը Իմ ուսուցումների վերլությունն ու վերագնահատումն է: Սակայն նրանց վերլուծությունների մեծ մասը հիմնված է մարդկային և բանական մտածողության վրա, որը քիչ նշանակություն ունի Իմ Թագավորության համար:

Երբ Ես կոչ եմ անում ձեզ դառնալ փոքր Իմ աչքում, Ես ի նկատի ունեմ դառնալ որպես մի երեխա, որը չի քննում: Ես ի նկատի ունեմ որպես մի երեխա, ով ամբողջապես վստահում է իր հորը առանց վախի իր սրտում:

Մինչև դուք փոքր չդառնաք Իմ աչքում, դուք հարմար չեք խոսելու Իմ անունից:

Երբ գտնեք այն խոնարհությունը, որը Ես եմ փնտրում, միայն այդ ժամանակ դուք կկարողանաք օգնել Ինձ հոգիներ փրկելու:

Ձեր ուսուցիչ

Մարդկության Ազատարար

Հիսուս Քրիստոս

Հայր Աստված. Դուք, սիրելի զավակներս, ձեր առջև փառահեղ ապագա ունեք

Կիրակի, 8 հունվարի, 2012թ, ցերեկվա ժ 02:04

Ես ողջ արարչության Թագավորն եմ: Ես Ալֆան եմ և Օմեգան: Ողջ մարդկությունը կպատվի Ինձ՝ Հայր Աստծուն, Ամենաբարձրյալ Արարչին և Թագավորին:

Իմ սիրելի աղջիկ, վերջապես մարդկության կողմից Ինձ՝ իրենց Երկնավոր Հորը Իր ողջ Փառքի մեջ պատվելու ժամանակը շատ մոտ է:

Իմ սիրելի զավակների աղոթքները, Իմ այդ խոնարհ ծառաների աղոթնքերը, հոգիներ են փրկում և մարդկության մեծ մասին, խավարի ուժերից, որոնք ծածկում են երկիրը:

Տեսեք, Ես ասում եմ ձեզ բոլորիդ Իմ խոնարհ հետևորդներ և ովքեր հավատում եք Ինձ՝ ողջ մարկության Արարչին, **միավորվեք**: Դուք պետք է միավորվեք որպես մեկ ուժ՝ պատվելու համար Ինձ՝ ձեր Հորը:

Աղոթեք միասնության մեջ հիմա գլոբալ դարձի համար: Սուրբ Հոգին Իմ կողմից դուրս էր հեղվել ողջ աշխարհի վրա 2011թ. մայիսի 10-ին: Նա արդեն նշան է արել այնքան շատ լավ հոգիների, որ հոչակեն Իմ խոսը:

Հիմա, երբ Սատանայի ուժը նվազում է, նա կհարձակվի որքան հնարավոր է շատ հոգիների վրա: **Ամենավատ հարձակումները կարվեն Իմ Երկեղեցիների վրա և բոլոր նրանց, ովքեր պատավում են Իմձ՝ իրենց Երկնավոր Հորը:**

Իմ եկեղեցու հավատը կշարունակի թուլանալ, բայց նրանց հավատը, ովքեր խոնարհվում են Իմ առջև, կշրջի բարի քրիստոնյաների մտքերն ամենուր և նրանց ավելի կմոտեցնի Ինձ:

Ավելի շատ խառնաշփոթություն է պարուրել Իմ զավակներին: Բոլոր նրանց, ովքեր հեռացել են Ինձ՝ իրենց Ամենաբարձրյալ Աստծուն աղոթելուց, լսեք մարդկությանն ուղղված Իմ աղերսը հիմա:

Երբեք ոչ մեկի թույլ մի տվեք, որ ձեզ հեռացնեն Իմ Սուրբ խոսքի ճշմարտությունից, որը տրված է մարդկությանը հոգիներ փրկելու համար:

Երբեք ոչ մեկի թույլ մի տվեք, որ ձեզ ետ կանգնեցնի այն խեղճ չարչարված հոգիների համար աղոթելուց, ովքեր բռնված են Սատանայի կողմից:

Միավորվեք որպես մեկ, զավակներս, և աղոթեք Գթասրտության համար մի վերջին անգամ: **Ձեր աղոթքներն Ինձ առաջարկում են այն օգնությունը, որը պահանջվում է մարդկության մեծ մասին փրկելու համար:**

Դու, աղջիկս, վերջին ժամանակների այն մարգարեն ես, ով ամենաշատը կտառապի: Այս առաքելության պատճառով դու կստանաս **իրենց տեսակի մեջ աշխարհին տրվող այսպիսի պատգամներից վերջինը,** և կլինես Սատանայի ու նրա զինակիցների առաջին թիրախը:

Հիմա շատ մարգարեներ կան, ում տրվել է Իմ կողմից սրբագործված սուրբ առաքելություն՝ օգնելու առաջնորդել մարդկությանը:

Քո առաքելությունից հետո **Ես ուրիշ ոչ մեկի չեմ ուղարկի Իմ պատգամները հաղորդելու, որովհետև աշխարհը, ինչպես դուք եք այն ճանաչում, ընդմիշտ փոխված կլինի:**

Որպես վերջին ժամանակների մարգարե, **քո ձայնը կմերժվի առաջին հերթին ամենաշատը հավատացողների կողմից:** Քանի որ նրանք կհակառակվեն այս աստվածային պատգամներին մի այնպիսի ձևով, որը կսարսափեցնի և կվախեցնի քեզ, աղջիկս:

Սատանան կհարձակվի այդ խեղճ սուրբ հոգիների վրա, օգտագործելով նրանց որպես միջոց Ինձ վնասելու համար: **Նա արդեն կուրացրել է հավատացողների սրտերը ճշմարտության հանդեպ:**

Նա կշրջի ճշմարտությունը նրանց մտքերի մեջ, ովքեր պատվում են Ինձ՝ իրենց Երկնավոր Հորը և Իմ սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին:

Սկայն ուրախ եղիր, որովհետև **արդեն իսկ շատ դարձ է տեղի ունեցել աշխարհում այլ տեսանողների ու մարգարեների օգնությամբ:**

Այնքան շատ կատաստրոֆիկ իրադարձություններից եք խուսաքփել նրանց աշխատանքի շնորհիվ:

Այնուամենայնիվ, **մի շարք երկնային պատիժներ կշարունակեն իջնել մարդկության վրա, որպեսզի մաքրագործեն ազգերին:**

Աղջիկս, օձի զորությունը կճզմվի, և շուտով: Ահա թե ինչու Իմ զավակները չպետք է վախենան ապագայից: Դուք, Իմ սիրելի զավակներ, **փառահեղ ապագա ունեք ձեր առջև:**

Դուք միայն պետք է աղոթեք ձեր եղբայրների և քույրերի համար և **ամբողջապես Ինձ վստահեք:**

Չնայած Նախազգուշացումը, որը տեղի կունենա շուտով և անսպասելիորեն, **դեռևս շատ աղոթքի կարիք կա:**

Աղոթքները, որոնք Ես հիմա խնդրում եմ ձեզնից, **հատկապես երիտասարդների համար են ողջ աշխարհով մեկ:**

Սրանք այն երեխաներն են, ովքեր ընկել են Սատանայի կողմից հնարված չար ստերի ծուղակը: Սրանք այն երեխաներն են, ովքեր իրենց ժամանակի մեծ մասն անց են կացնում պաշտելով կեղծ կուռքերի և հավատալով մի սուտ աշխարհի:

Ամենաշատը նրանք ձեր աղոթքների կարիքն ունեն:

Միավորվեք, զավակներս:

Մի կողմ դրեք ձեր տարբերությունները:

Մի կողմ նետեք ձեր հպարտության թիկնոցը:

Սիրով և խոնարհությամբ ծնկի իջեք խնդրելու համար Ինձնից այն շնորհները, որոնց կարիքն ունեք:

Այդ շնորհները կողողեն ձեր հոգին Սուրբ Հոգով: Միայն այդ ժամանակ ձեր աղոթքները կլսվեն և պատասխան կտրվի դրանց:

Ձեր սիրող Երկնավոր Հայր

Ամենաբարձրյալ Աստված

Հիսուսը կոչ է անում աշխարհի բոլոր երեխաներին

Կիրակի, 8 հունվարի, 2012թ, ցերեկվա ժ. 03:30

Իմ սիրելի աղջիկ, Ես այսօր կոչ եմ անում բոլոր երեխաներին՝ յոթը տարեկանից բարձր, Իմ յուրաքանչյուր երեխայի աշխարհում:

Դուք, Իմ փոքրիկ երեխաներ, գոհարների պես եք Իմ աչքում:

Դուք Ինձ այնպիսի քնքուշ սեր եք բերում, և Ես ուրախանում եմ ձեր ընկերակցությամբ:

Իմացեք, որ Ես ձեզ շատ եմ սիրում: Ձեզնից ոմանք արդեն Ինձ ճանաչում են, և դա լավ է:

Ես ձեզ հրավիրում եմ, որ Ինձ հետ ավելի շատ խոսեք: Ձեր սեփական բառերով: Ինչպես ընկերոջ հետ:

Երբեք մի մտածեք, որ պետք է սովորեք անգիր արտասանել աղոթքներ, որոնք ձեզ համար դժվար կարող են լինել:

Դրա փոխարեն եկեք Ինձ մոտ և կիսեք ձեր բոլոր մտքերը, վախը, նորությունները կամ պրոբլեմները:

Ես միշտ ձեր կողքին եմ, նույնիսկ երբ դուք անտեսում եք Ինձ: Ես միշտ լի եմ հույսով:

Այն խեղճ երիտասարդներին, **ում կյանքը լի է անհավատարմությամբ, կամ ովքեր ընկել են ալկոհոլի և թմրանյութերի ազդեցության տակ, դուք պետք է իմանաք հետևյալը:**

Չնայած դուք ձեր ներսում դատարկություն եք զգում, դուք պետք է Ինձ տաք ձեր ձեռքը, և Ես կբռնեմ այն: **Ես կփրկեմ ձեզ շփոթության ծովի մեջ ընկղմվելուց:**

Ձեզնից շատերն են իրենց զգում անարժեք և անկարևոր: Դուք այնքան ճնշված եք զգում նրանց պատճառով, ում պաշտում եք կուռքի պես երաժշտության և հռչակի աշխարհում, որ ձեզ ամբողջապես անհամապատասխան եք զգում:

Երբեք ձեզ այդպես մի զգացեք, Իմ փոքրիկ զավակներ, որովհետև Իմ աչքում դուք չափազանց հատուկ եք:

Ձեզնից յուրաքանչյուրը մի եզակի տեղ ունի Իմ սրտում: Թույլ տվեք Ինձ տանել ձեզ ճամփորդության դեպի մի հրաշալի գեղեցիկ ապագա:

Ես շուտով կբերեմ մի նոր հրաշալի Խաղաղության և Փառքի Դարաշրջան երկրի վրա:

Դուք պետք է ուժեղ մնաք: Երբեք տեղի չտաք, երբ ձեզ ընճված եք զգում: Երբեք չհուսահատվեք, երբ ձեզ անարժան եք զգում:

Դուք, հիշեք, ծնվել մի նպատակի համար: Անկախ ձեր հանգամանքներից, ձեր ծննդյան նպատակը հետևյալն է: Դուք ծնվել եք միանալու համար Ինձ որպես Իմ նոր փառահեղ թագավորության մասնիկ:

Ես գիտեմ, որ ձեզ համար դժվար է լսել Իմ ձայնը, քանի որ շատ կեղծ Աստվածներ կան, որոնք փորձում են գրավել ձեր ուշադրությունը:

Իմ խոստումը ձեզ հետևյալն է: Ապրեք ձեր կյանքը Ինձ՝ ձեր Հիսուսին հուսալով և սիրելով, և Ես կտամ ձեզ Դրախտի ընծան: Այս Դրախտն այն է, ինչը սպասում է ձեզ, եթե դուք միայն խնդրեք Ինձ, որ օգնեմ ձեզ դեպի Ինձ ձեր ուղևորության ընթացքում:

Ես այն սերն եմ, որը պակաում է ձեր կյանքում:

Ես այն խաղաղությունն եմ, որը դուք փնտրում եք:

Ես այն օգնությունն եմ, որի կարիքն ունեք, որ ձեր սրտում նորից սեր զգաք:

Ես Սեր եմ:

Ես Լույսն եմ:

Առանց Ինձ դուք կմնաք խավարի մեջ:

Ես սիրում եմ ձեզ, անկախ նրանից, թե դուք ինչպես ցավ կպատճառեք Ինձ կամ կվիրավորեք Ինձ:

Ասեք այս փոքրիկ աղոթքը, և Ես անմիջապես վազելով ձեզ մոտ կգամ.

Հիսուս, եթե կարող ես, լսիր ինձ

Հետո լսիր օգնության իմ կանչը,

Խնդրում եմ, օգնիր ինձ զբաղվել նրանցով, ովքեր ինձ ցավ են պատճառում,

Օգնիր ինձ կանգնեցնել նախանձը, որ չիշխի իմ կյանքի վրա, և չցանկանամ բաներ

Որոնք ես չեմ կարող ունենալ,

Դրա փոխարեն բաց իմ սիրտը Քո հանդեպ, սիրելի Հիսուս,

Օգնիր ինձ զգալ իսկական սերը՝ Քո սերը,

և զգալ ճշմարիտ խաղաղություն իմ սրտի մեջ: Ամեն:

Ուրախացեք, զավակներս, որովհետև Ես հիմա խոսում են ձեր սրտի հետ Երկնքից:

Ես իրական եմ:

Ես գոյություն ունեմ:

Ես սիրում եմ ձեզ և Ես երբեք չեմ դադարեցնի Իմ պայքարը, որ փրկեմ ձեզ, որպեսզի կարողանամ տանել ձեզ, ձեր ընտանիքը և ընկերներին Երկրի վրա Նոր Դրախտ:

Այդ Դրախտը ստեղծվել էր Ադամի և Եվայի համար և հիմա կվերադառնա երկիր:

Ես ցանկանում եմ, որ դուք լինեք այդ նոր Փառահեղ կյանքի մի մասը, որը ձեր երազանքների սահմաններից այն կողմ է:

Ես օրհնում եմ ձեզ հիմա:

Ձեր սիրող ընկեր

Հիսուս

Գլոբալ խստովանությունից հետո Ես կնախապատրաստեմ Իմ Երկրորդ Գալստյան համար

Երկուշաբթի, 9 հունվարի, 2012թ, առավոտյան ժ 08:10

Իմ սիրելի աղջիկ, ժամանակն արագորեն շարժվում է, և **Նախազգուշացումը կազդարարի Իմ Երկրորդ Գալստյան համար նախապատրաստությունը:**

Մարդկությունը պետք է ընդունի, որ այս մեծ իրադարձության ժամանակն արդեն իրենց վրա է հասել:

Ժամանակ մի կորցրեք, նախապատրաստեք ձեր հոգիները և ձեր ընտանիքի անդամների հոգիները Իմ Փառահեղ Վերադարձի համար:

Իմ Երկրորդ Գալուստը վերջ կտա այն տառապանքին, որին դուք դիմացել եք երկրի վրա հազարավոր տարիներ:

Այնքան մեծ է այդ Փառահեղ իրադարձությունը, որ ոչ մեկը դուրս չի մնա զարմանքով և սարսափով հասկանալուց երբ Ես կերևամ երկնքում:

Դուք, այս սերնդից ընտրվել եք, որ օգտվեք Ինձ հետ այս ճամփորդությունից դեպի **Իմ Նոր Դրախտը, Խաղաղության Դարաշրջանի ընթացքում, որի վրա Ես կթագավորեմ:**

Ոչ մեկը չպետք է բացառվի: Ոչ մի հոգու չպետք է թույլ տրվի ցանցից դուրս ընկնել: Իմ ամենամեծ ցանկությունն է, որ ձեզ բոլորիդ Ինձ հետ բերեմ Իմ Թագավորություն:

Սա է այն փառքը, որին մարդկությունը սպասել է խաչի վրա Իմ մահից ի վեր:

Ձեզնից նրանց, ովքեր չեն ուզում տեսնել Իմ աղերսները, Ես ձեզ կոչ եմ անում սկսել հիմա նախապատրաստվելու:

Իմ ժամանակը մոտենում է: **Ես հիմա ուղարկել եմ Իմ վերջին պատգամատարին աշխարհ, օգնելու ձեզ, որ նախապատրաստեք ձեր հոգիները: Սա մարգարեացվել է:**

Մի անտեսեք Իմ նախազգուշացումը, որովհետև եթե անտեսեք, դուք արթուն չեք լինի և չեք կարողանա ինչպես հարկն է նախապատրաստվել:

Այժմվանից սկսած Ես շատ պատգամներ կհաղորդեմ, որպեսզի աշխարհը պատրաստ լինի ընդունելու Իմձ որպես իրենց Ղեկավար:

Ձեր սիրող Հիսուս

Ողջ մարդկության Ազատարար

Կույս Մարիամ. Այնքան շատ հոգիներ են ընտրում անտեսել Իմ տված նշանները

Երեքշաբթի, 10 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 08:30

Զավակս, դու պետք է ասես աշխարհին աղոթքի կարևորության մասին այս ժամանակ:

Իմ զավակները տառապում են ամենուր ամեն երկրում:

Կարևոր է, որ Աստծո բոլոր զավակները միավորվեն այս ժամին որպեսզի խավարը վերջապես վեր բարձրացվի երկրի վրայից:

Ինչպես եմ Ես լաց լինում վշտից երբ այդ հոգիներն ընտրում են անտեսել Իմ այցերը տեսանողներին երկրի վրա: **Այնքան շատերն են ընտրում անտեսել այն նշանները, որոնք Ես տալիս եմ վստահեցնելու համար, որ հավատը կարող է վերականգնվել:**

Այնքան սառն են նրանց սրտերը, ներառյալ քահանաներինն ու եկեղեցականներինը, ովքեր կույր են ճշմրտության հանդեպ, որ շատ ժամանակ է անտեղի վատնվել:

Եթե նրանք միայն բացեին իրենց սրտերը **այն պատգամների հանդեպ, որոնք Ես տվել եմ աշխարհին,** ապա ավելի շատ հոգիների կտրվեր այն սնունդը, որի կարիքը նրանք ունեն:

Սրանք վերջին օրերն են, երբ Իմ խրախուսանքի խոսքերին պետք է ուշ դարձնել:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որ Իմ Որդու ձայնը լսվի այնպես, ինչպես պետք է:

Մի՞թե կարծում եք, զավակներս, որ Նա չի նախապատրաստի մարդկությանը Իր մեծ գթասրտության համար:

Հիմա Նա հասնում է սրան որքան հնարավոր է շատ հոգիների դարձի գալու միջոցով:

Նրա պլաններն ավարտուն են, մեկ բացառությամբ:Նա կարիք ունի ավելի շատ աղոթքների, քանի որ առանց այդ աղոթքների հոգիներ կկորչեն հօգուտ խաբեբայի:

Զավակս, Իմ Որդին շուտով Իր զավակներին կբերի այնքան անհրաժեշտ օգնությունը:

Իր գթասրտությամբ Նա հիմա կնախապատրաստի աշխարհը Իր Երկրորդ Գալստյան համար:

Աղոթիր, որ բոլոր նրանք, ովքեր հավատում են Իմ Որդուն, բացեն իրենց սրտերը Նրա սուրբ պատգամների ճշմարտության հանդեպ:

Եթե նրանք լսեն և հետևեն Նրա ցուցումներրին, ամեն ինչ լավ կլինի:

Եթե նրանք անտեսեն այն նախազգուշացումը, որը տրվում է նրանց մաքուր սիրուց ելնելով, նրանք կմերժեն մյուսների փրկության հնարավորությունը:

Ես աղերսում եմ հոգիների առատաձեռնությունը՝ **տալ իրենց հավատարմության խոստումն Իմ սիրելի Որդուն** Նրա հետ միասին հաղթական արշավելով դեպի Փառապանծ թագավորումը Նոր Դրախտի մեջ:

Որոշ ժամանակով պատգամատարներ են ուղարկվել աշխարհ, օգնելու համար աշխարհին նախապատրաստվելու այս մեծ իրադարձությանը:

Վերջնական էտապներն արդեն տեղում են:

Լսեք հիմա Իմ Որդու ձայնը մինչ Նա խոսում է ձեզ հետ: Մի մերժեք Նրան:

Ձեր սիրող Մայր

Երկնքի Թագուհի

Մայր Փրկության

Ամենամեղծ պղծությունն է նյութվում հրեաների դեմ նրանց ողջակիզումից (հոլոքոսթ) ի վեր

Չորեքշաբթի, 11 հունվարի, 2012թ, ցերեկվա ժ. 03:00

Իմ սիրելի աղջիկ, նայիր հիմա Գլոբալ ուժի կողմից կատարվող ջանքերին, որոնք լույսից չեն, որը փորձում է կամպանիա ծավալել Իմ ժողովրդի դեմ:

Ես ի նկատի ունեմ **քրիստոնյաներին և Իմ ընտրյալ ժողովրդին՝ հրեաներին:**

Չար պլաններ են ծրագրում սրբելու համար քրիստոնեության սովորությունները դիվային բայց աննկատելի կերպով: Դա կսկսվի **ամենուրեք արևմտյան երկրների սահմանադրությունների մեջ կատարվող փոփոխություններով:**

Ամեն ջանք կգործադրվի **Իմ քրիստոնեական եկեղեցիների վրա վիրավորական պահանջներ դնելով:** Իմ սրբազան սպասավորները դանդաղորեն ետ կքաշվեն, թողնելով Իմ ժողովրդին քիչ հոգևոր աջակցությամբ: Այդ բոլոր օրենքները խորամանկորեն արտաքինից կունենան հանդուրժողականության տեսք:

Ձեր հավատը, զավակներս, փորձության է ենթարկվում ինչպես երբեք:

Քրիստոնեությունը, և Իմ անունը հրապարակայնորեն հռչակելու ցանկացած փորձ, կխանգարվի: Դրա փոխարեն **դուրս կգա մի դատարկ տեսություն,** և մարդիկ շփոթության կմատնվեն: Նրանք կմտածեն, որ այդ տեսությունը ճշմարտության լավ և արդարացի փոխարինումն է, այն դեպքում, երբ այն փաստորեն կլինի մի սուտ:

Այդ չար խումբն այնքան հզոր է, շատ քչերը գիտեն որ նրանք գոյություն ունեն: Չնայած դրան, նրանք ամենուր են՝ քաշելով լարերը: Իմ զավակները խամաճիկների պես են:

Իմ ընտրյալ ժողովուրդը՝ **հրեաները, նորից կանգնած են մի սարսափելի հալածանքի առջև:** Գաղտնի ձևով պլաններ են նյութվում նրանց ոչնչացնելու համար:

Նրանք, ում հրեաները կարծում են թե իրենց ընկերներն են, իրականում հրեաների թշնամիներն են:

Նրանք այնպիսի տառապանքներ կկրեն, **Ես կոչ եմ անում ողջ մարդկությանն աղոթել Իսրայելի համար:**

Իմ ժողովրդի դեմ նյութվում է հոլոքոսթից ի վեր եղած ամենամեծ պղծությունը:

Աղոթեք, աղոթեք, որ **Հակաքրիստոսի խումբը** կանգնեցվի այդ չար գործողությունները կատարելուց:

Այդ խավար հոգիները ձեր աղոթքների կարիքն ունեն, որպեսզի Նախազգուշացման ընթացքում ճանաչեն իրենց վիրավորանքները: **Աղոթեք, որ նրանք վայր դնեն իրենց զենքերը և Իմ Գթասրտությունը խնդրեն:**

Եթե նրանք անեն այդ, ապա պատերազմն ու անհանգստությունն Իսրայելում կարող է նվազեցվել:

Շատ մարգարեություններ կկատարվեն հիմա ձեր աչքերի առջև: Նրանք, ովքեր կույր են Իմ խոստումների համար, նրանց պետք է տրվի Իմ Գթասրտության լույսը, որ նորից տեսնեն:

Չխաբվեք, զավակներս, Այն, ինչ արտաքինից լավ էթվում, միշտ այնպիսին չէ, ինչպիսին թվում է: Խաղաղապահ ուժերին, որոնց մեծ մասը անմեղ զոհեր են, խաբում են:

Երբեք չվախենաք, քանի որ Իմ Գթասրտությունը կարևոր ազդեցություն կունենա **այդ Սեկտի վրա, ովքեր դարեր շարունակ դավեր են նյութում Իմ Եկեղեցու դեմ:**

Նրանք չեն կարող հաղթել և չեն հաղթի: Սակայն նրանք կարող են ահռելի սարսափ պատճառել, եթե աղոթքը չմեղմացնի նրանց չար գերիշխանությունը:

Աղոթեք Խաչակրաց արշավանքի նոր աղոթքը (18) օգնելու համար կանգնեցնել Հակաքրիստոսին և նրա խմբին, որոնց մասին Ես խոսում եմ:

Ո՜հ, սիրելի Հիսուս, փրկիր աշխարհը Հակաքրիստոսից,

Պաշտպանիր մեզ Սատանայի չար ծուղակներից,

Փրկիր Քո եկեղեցու վերջին մնացորդներին չարից,

Տուր Քո բոլոր եկեղեցիներին անհրաժեշտ զորությունն ու շնորհները՝ պաշտպանելու համար մեզ Սատանայի և նրա տեռորիստների բանակի կողմից նյութված պատերազմներից ու հալածանքներից:

Ամեն:

Ձեր սիրող Հիսուս

Փրկիչ և Ազատարար ողջ մարդկության

Աղոթեք մահացու մեղքի մեջ գտնվող հոգիների համար, ովքեր թողություն ստանալու հնարավորություն չեն ունենա

Հինգշաբթի, 12 հունվարի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, յուրաքանչյուր ոք պետք է **աղոթի սրտանց հիմա այն հոգիների համար, ովքեր չեն դիմանա շոկին, երբ ականատես լինեն Նախազգուշացմանը և Իմ Մեծ Գթասրտությանը:**

Մահացու մեղքի մեջ գտնվող այդ խեղճ հոգիներից ոմանք հնարավորություն չեն ունենա թողություն ստանալու, ուստի խնդրում եմ առաջարկեք ձեր աղոթքներն այդ հոգիների համար:

Անհրաժեշտ է հրատապ աղոթք խավարում գտնվող այդ հոգիների համար: Այնքան նպատակաուղղված են նրանք մարդկությանը վերացնելու իրենց չարության մեջ, դրամային և այլ վերահսկողությունների միջոցով, որ Նախազգուշացումը նրանց համար սարսափելի շոկ կլինի:

Ես կարիք ունեմ, որ նրանց տրվաի ապաշխարության հնարավորություն, **սակայն շատերը կդիմադրեն Ինձ:** Խնդրում եմ աղոթեք այդ տառապած հոգիների համար:

Ի վերջո, Ես կցանկանայի խնդրել Իմ բոլոր հետևորդներին **աղոթել Աստվածային Գթասրտության աղոթքը յուրաքանչյուր հնարավորության դեպքում** մինչ հիմա Իմ Մեծ Նախազգուշացման ժամանակն ավելի է մոտենում:

Բոլոր այն հավատացյալները, ովքեր մերժում են հավատալ, որ այդ Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը, իրենց Փրկիչը, որ խոսում եմ իրենց հետ այս պատգամների միջոցով, լսեք Ինձ հիմա:

Մի եղեք այն խեղճ հոգիների պես, ովքեր ապրում էին Նոյի ժամանակներում, երբ նրան ծաղրում էին:

Բացեք ձեր միտքը և առատաձեռնորեն ժամանակ հատկացրեք աղոթքի համար: Սա այն ամենն է, ինչ Ես ձեզնից հիմա խնդրում եմ: Դուք, զավակներս, զղջման արցունքներ կթափեք, երբ հասկանաք ձեր սխալը: Եվ այո, Ես կներեմ ձեզ, նույնիսկ եթե դուք Ինձ խորապես վիրավորած լինեք:

Ձեր վիրավորանքները ցավ են պատճառում Ինձ:

Ձեր խայթոցները դանակի պես են, Ինձ շրջելով ներսից դուրս, որովհետև դուք մտածում եք, թե ճանաչում եք Ինձ, բայց չեք ճանաչում:

Ձեր հոգին փակ է Իմ ճշմարիտ ձայնի հանդեպ, որը նման է կանչի անապատում:

Ձեր գոռոզությունը վիրավորում է Ինձ:

Դուք պետք է ընդունեք, որ հիմա պլանավորվում է Իմ Երկրորդ Գալուստի ճանապարհը:

Հիմա դուք կարող եք չլսել Ինձ, մինչ Ես խնդրում եմ ձեզ աղոթել այն հոգիների համար, որոնց Ես հնարաավոր է կորցնեմ: Բայց դուք կաղոթեք, երբ սա ապացուցվի այդ մեծ իրադարձության ժամանակ:

Քանի որ այդ ժամանակ Ես ակնկալում եմ, որ դուք կհետևեք Ինձ և կկազմավորեք Իմ Եկեղեցու մնացորդները: Այդ ժամանակ է, որ մենք բոլորս կմիավորվենք, բարձրացնելու համար այդ մնացած կտորները, մինչ կքայլենք դեպի Իմ Նոր Դրախտը:

Ձեր սիրող Հիսուս Քրիստոս

Փրկիչ և Ազատարար ողջ մարդկության

Կույս Մարիամ. Աղոթքի Խաչակրաց արշավանք (19) Աղոթք երիտասարդների համար

Ուրբաթ, 13 հունվարի, 2012թ, առավոտյան ժ 08:00

Զավակս, այսօր Ես շատ վշտացած եմ, որովհետև Ես շատ եմ տառապում, մինչ մտածում եմ այն խեղճ հոգիների մասին, ովքեր կմեռնեն Նախազգուշացման ընթացքում:

Դու պետք է խնդրես շտապ աղոթքներ այդ հոգիների համար, ովքեր բարկացնում են Իմ Հորը: Նրանց վարքը պղծություն է Նրա աչքում:

Խնդրում եմ աղոթեք, աղոթեք, աղոթեք խավարի այդ զավակների համար, որոնցից շատերը չգիտեն թե ինչ են անում:

Նրանց չարությունը ստիպում է Իմ Որդուն ողբալ, իսկ Նրա վերքերին՝ թարախակալել: Կարևոր է, որ որքան հնարավոր է շատ հոգիներ պարուրվեն Իմ Որդու բազուկների մեջ Նրա Աստվածային Գթասրտության ժամանակ: Խնդրում եմ,

խնդրիր, որ աղոթքի այս արշավանքն ասվի Ինձ՝ ՓրկությանՄորը փրկելու ւհամար այդ խեղճ զավակներին:

Մայր Փրկության, ես խնդրում եմ Քեզ աղոթել գթասրտության համար

Դեպի երիտասարդ հոգիները, ովքեր սարսափելի խավարի մեջ են, որպեսզի նրանք ճանաչեն Քո սիրելի Որդուն, երբ Նա գա ազատելու համար ողջ մարդկությանը

Թող ոչ մի հոգի չընկնի ճանապարհից դուրս

Թող ոչ մի հոգի չմերժի Նրա Մեծ Գթասրտությունը

Ես աղոթում եմ Մայր, որ բոլորը փրկվեն և խնդրում եմ Քեզ ծածկել այդ հոգիներին Քո Սուրբ Թիկնոցով

Ապահովելու համար նրանց այն պաշտպանությունը խաբեբայից, որի կարիքը նրանք ունեն:

Զավակս, բոլոր հոգիները կարևոր են Իմ Որդու համար: Բայց մահացու մեղքի մեջ գտնվող երիտասարդ հոգիներն են, որ ամենից շատ վիրավորում են Նրան:

Աղոթիր, որ Գթասրտության լույսը փայլի նրանց մտքերի և հոգիների խավարի միջով: Աղոթիր, որ նրանք մերժեն անառակության և դատարկ իրենց սարսափելի կյանքը որով ապրում են: Աղոթիր, որ նրանք հասնեն և խնդրեն գթասրտություն, այլապես երբեք չեն ստանա այն շնորհները, որոնց կարիքն ունեն Նոր Դրախտ մտնելու համար:

Ինչպիսի կորուստ կլինեն այդ երիտասաարդները ձեզ համար, ովքեր կընդունեն Նախազգուշացման ընծան և կմտնեն երկրի վրա Նոր Դրախտի Դարաշրջանը: Իմ Որդու սիրտը կկոտրվի, եթե նրանք չկարողանան մտնել այնտեղ:

Ձեր սիրելի Մայր

Մարիամ Երկնքի Թագուհի

Մայր Փրկության

Կույս Մարիամ. Զավակս, շուտով երկրի վրա խաղաղությունը կիշխի

Ուրբաթ, 13 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 08:15

Զավակս, շուտով երկրի վրա խաղաղությունը կիշխի:

Անհանգստություն ու թշնամամք կլինի, բայց դա անհրաժեշտ է **երկրի վրա չարությունը վերջնականապես արմատախիլ անելու համար:**

Իմ Հոր ձեռքն արագորեն կիջնի նրանց վրա, ովքեր անտեսում են Իմ Որդու գթասրտությունը: Նա թույլ չի տա անհնազանդությունը այն բանից հետո, երբ նրանց բացահայտվի ճշմարտությունը:

Նրանք, ովքեր Նախազգուշացումից հետո իրենց մեջքը շրջեն Իմ Որդու հանդեպ, **նրանց որոշակի ժամանակ կհատկացվի իրենց մեղքերի համար զղջալու, բայց այդ ժամանակը երկար չի լինի:**

Աղոթեք այն հոգիներ համար, որոնց համառությունը կլինի իրենց անկման պատճառը:

Զավակս, փոփոխություններն արդեն ընթացքի մեջ են, և **շատ բան տեղի կունենա արագորեն:**

Դիտեք երկինքը զավակներս, Իմ Որդու Գթասրտության առաջին նշանների համար:

Նրանք, ովքեր սրտով խոնարհ են և կոտրված , թող չվախենան, որովհետև դուք այս ժամին եք սպասել մինչ այժմ:

Այն հոգիները, ովքեր չեն ընդունում Իմ Որդու գոյությունը, կզարմանան և կվշտանան, երբ վերջապես ճշմարտությունը կներկայացվի իրենց:

Այն չարչաչված հոգիները, ովքեր հավատարմության խոստում են տվել չարին, կհամակվեն վշտով, մինչ ուրիշները կթաքնվեն ճշմարտությունից, որովհետև ի վիճակի չեն լինի դիմանալ լույսին:

Աղոթեք, որ այդ բոլոր հոգիները, ուրիշների աղոթքների միջոցով կարողանան և ազատագրվեն Իմ թանկագին Որդու աչքում:

Դարձը կկասեցնի երկնային պատիժը և կթեթևացնի Հակաքրիստոսի կողմից նախապատրաստվող չար պլանները մարդկությանը ոչնչացնելու համար:

Աղոթեք, որ Երկնքի և չարի միջև պատերազմի արդյունքում Աստծո բոլոր զավակները կարողանան փրկվել և ազատվել դժոխքի կրակներից:

Ձեր սիրող Մայր

Վարդերի Թագուհի

Մայր Փրկության

Գիտնականները հրապարակայնորեն կժխտեն, որ այդ հրաշքը տեղի է ունեցել

Ուրբաթ, 13 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 09:35

Իմ սիրելի աղջիկ, Իմ Աստվածային Գթասրտությունը վերջապես կարձակվի և կհասկացվի:

Իմ Գթասրտության ճառագայթները, որոնք կսկսվեն վարդագույն երկնքի հետ, կողողեն աշխարհը մարդկությանը փրկելու համար:

Ոչ մեկը դուրս չի մնա: Նախագահները, թագավորները, թագուհիները, արքայազները, աղքատները, հայտնի մարդիկ, մուրացկանները, գողերը, մարդասպանները, աթեիստները և Հայր Աստծուն ու Ինձ՝ Նրա սիրելի Որդուն հավատացողները, կհուզվեն Իմ ընծայից:

Հպարտները կընկնեն խոնարհությամբ, երբ տեսնեն թե ինչպես են իրենց ծանր մեղքերը երևում Իմ աչքում:

Չարերը կտեսնեն Իմ Աստվածային գոյության լույսը և ստիպված կլինեն ընտրություն կատարել: Նրանք կընտրեն Իմ սերը և գասրտությունը կամ կապտակեն Իմ դեմքին: Ամեն դեպքում Աստծո բոլոր զավակները կտեսնեն Իմ գթասրտության ճառագայթները, և նրանց համար դժվար կլինի անտեսել այս հրաշքը:

Ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ աղոթել, որ Իմ գթասրտությունը ողջունվի և ընդունվի ինչպես քաղցած մարդն է բռնում կյանքի հացը: Առանց այդ հացի նա կմեռնի:

Միայն երկու ուղի կա: Եկեք Ինձ հետ՝ ձեր Աստվածային Փրկչի հետ, կամ կանգնեք դժոխքի կրակների առաջ:

Ես ամենագթասիրտն եմ, բայց Նախազգուշացումից հետո ձեզ համար այնքան քիչ ժամանակ կնմա զղջալու համար:

Շատ գիտնականներ և Սատանայի բանակում գտնվողներ հրապարակայնորեն կմերժեն, որ այդ մեծ հրաշքը տեղի է ունեցել: Աղոթեք նրանց համար, որպեսզի այդ խաբեությունը չգայթակղեցնի այն գաղջ հոգիներին, ովքեր կրկին գայթակղության կենթարկվեն դեպի Ինձ շրջելու իրենց մեջքը:

Նախապատրաստվեք, զավակներս: Հիշեք, որ այս միջամտությունը Երկնքից միակ միջոցն է, որով Ես կարող եմ փրկել մարդկության մեծ մասին:

Եթե Ես դուրս չհեղեմ Իմ գթասրտությունն աշխարհի վրա, շատ քիչ հոգիներ կկարողանան ներս մտնել երկրի վրա Իմ Նոր Դրախտ:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ և ողջունում եմ ձեզ Իմ սիրո և գթասրտության գրկի մեջ:

Չվախենաք, ձեր հոգիները կհեղեղվեն Իմ Սուրբ Հոգով: Հավատացողներին դա ավելի ուժեղ կդարձնի Իմ հանդեպ ձեր սիրո մեջ, իսկ հետո դուք կմիանաք Իմ բանակին, դարձի բերելու համար նրանց, ովքեր ավելի շատ ժամանակի կարիք ունեն դեպի Ինձ շրջվելու համար:

Ձեր Փրկիչ և Թագավոր Գթասրտության

Հիսուս Քրիստոս

Հայր Աստված. Երկրորդ Գալուստն ազդարարող վերջին պատգամատարը

Երկուշաբթի, 16 հունվարի, 2011թ, ցերեկվա ժ 01:20

Աղջիկս, երբ Ես մարգարեներ եմ ուղարկում աշխարհ, նրանք սովորաբար հենց նրանք են, ումից ամենաքիչն եք սպասում:

Դուք երբեք նրանց չեք գտնի Իմ եկեղեցու վերին էշելոններում: Ոչ էլ նրանք արտաքինից ամենասուրբ հոգիները կլինեն: **Շատ դեպքերում նրանք արժանի չեն լինի այս հոգևոր ընծային:**

Սակայն Ես ընտրում եմ ոչ կատարյալ հոգիներ կյանքի անսովոր և պարզ խավերից, **որպեսզի ձուլեմ նրանց դարձնելու համար նրանց Իմ ցանկացած արարածներ:**

Ժամանակների վերջի Իմ մարգարեները տարբեր չեն: Նրանց հեշտությամբ չեն ընդունի: Ինչպես սկզբում, երբ Ես Իմ մարգարեներին ուղարկեցի, որ նախապատրաստեն մարդկությանը Իմ սիրելի որդու՝ Հիսուս Քրիստոսի, Մեսիայի հայտնության համար, նրանց համար դժվար էր իրենց ձայնը լսելի դարձնել:

Ժամանակաների վերջի Իմ իսկական պատգամատարների ձայները չեն լսվի իրենց առաքելության սկզբում: Սակայն, ժամանակի ընթացքում, նրանք կճանաչվեն: Քանի որ Իմ ձայնն է, որ հեշտությամբ կճանաչվի:

Դու, աղջիկս, վերջին պատգամատարն ես, ուղարկված ազդարարելու Իմ սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի հայտնությունը Նրա այդքան ակնկալված Երկրորդ Գալուստի համար:

Սա վախեցնում է քեզ և երբեմն բավականին դժվարընբռնելի է: Սակայն դա ճշմարտությունն է:

Այս գործը, երբ քեզ կտրվեն աստվածային պատգամներ՝ նախապատրաստելու համար Իմ եկեղեցու մնացորդը երկրի վրա Երկրորդ Գալուստի համար, դժվար կլինի:

Մինչ Ես մինչ այժմ ընտրել եմ շատ ընտրյալ հոգիների և կհաղորդակցվեմ նրանց հետ ողջ մարդկության բարօրության համար, նրանց բաժինն ավելի հեշտ կլինի:

Քո բաժինը չափազանց դժվար կլինի, և քեզ կհետապնդեն դրա պատճառով:

Ես օրհնում եմ քեզ Իմ Երկնային Թագավորության յուրաքանչյուր շնորհով:

Դու առաջ կշարժվես որպես ընտրված գործիք՝ աշխարհին հաղորդելու Իմ Ամենասուրբ Խոսքը:

Այս աշխատանքը միշտ պաշտպանված կլինի:

Այո, դու համարյա ամեն օր հարձակման կենթարկվես, բայց իմացիր հետևյալը: Եթե այս աշխատանքն այդքան կարևոր չլիներ, կարծում ես այն կարժանանա՞ր Սատանայի և նրա ընկած հրեշտակների ուշադրությանը:

Նրանք, աղջիկս, ներթափանցել են երկիր և շատ դեպքերում առանց կասկած առաջացնելու սողոսկել են Իմ զավակներից շատերի սրտերի ու հոգիների մեջ:

Քո աշխատանքի սուրբ ճանապարհը, դու՝ վերջին մարգարեն երկիր ուղարկված օգնելու համար փրկելու մարդկությանը Սատանայի ճանկերից, կանխասացվել է գրվածքներում:

Աշխարհը սպասել է Իմ Սուրբ Հրամանով տրվող այս ցուցումներին:

Շատ կեղծ մարգարեներ կփորձեն խանգարել Իմ այս սուրբ խոսքին, ստեր և խառնաշփոթություն տարածելու միջոցով:

Այս պատգամները քննության կենթարկվեն Իմ եկեղեցու կողմից սխալներ գտնելու համար: Սակայն նրանք տարածում են միայն ճշմարտությունը:

Շատ ճշմարտություն, որը դարեր ի վեր անտեսվել է Իմ զավակների կողմից, նորից ի դերև կգա:

Ավելի շատ հայտնություններ կբացահայտվեն ձեզ, զավակներս, ձեր հավիտենական կյանքի ճշմարտության վերաբերյալ:

Այս աշխատանքը կատաղություն կառաջացնի, աղջիկս: Քեզ վրա կթքեն, քեզ կծաղրեն, վերևից կնայեն և կխանգարեն ամեն երևակայելի ձևով:

Նրանք, ում համար դժվար է հասկանալ քեզ տրված ճշմարտությունը, լսեք հիմա Իմ աղերսները:

Դուք պետք է Ինձնից խնդրեք Սուրբ Հոգու ընծան, նախքան կկարողանաք բացել ձեր ականջները՝ լսելու Իմ ձայնը, Իմ սուրբ Խոսքի ճշմարտությանը և այն ցուցումներին, որ Ես կտամ ձեզ բոլորիդ, որպեսզի կարողանաք հավիտենական կյանք ունենալ:

Իմ խոսքերը կլինեն պարզ, որպեսզի յուրաքանչյուր մարդ, կին և երեխա կարողանա հետևել Իմ սուրբ խոսքին: Բայց դուք պետք է իմանաք սա: Մինչ Իմ խոսքի միջոցով շատ սեր և լույս կշողա, կլինի նաև աստվածային իշխանության մի երանգ, որ ձեզ համար դժվար կլինի անտեսել:

Այսպես կիմանք, որ այդ Ես եմ՝ ձեր Աստվածը, ձեր Հավիտենական Հայրը, որ խոսում եմ: Իմ սերը կնվաճի ձեր հոգիները և վեր կբարձրացնի ձեր սրտերը Իմի հետ միության մեջ:

Բոլոր նախապատրաստությունները տեղում են: Իմ սիրելի Որդու Մեծ Գթասրտությունից հետո ժամանակ կդրվի՝ նախապատրաստելու համար աշխարհը Նրա Երկրորդ Գալուստի համար:

Այո, զավակներս: Ես հիմա պատրաստություն եմ տեսնում փրկելու համար Իմ զավակներին խավարից: Ես ետ եմ պահանջում Իմ արարչությանը, Իմ զավակներին և տանում եմ ձեզ դեպի իրավամբ ձեզ պատկանող տունը, ձեր ժառանգությունը: Նոր Դրախտը:

Համբերատար եղեք, զավակներս: Պարզապես հիշեք, որ Ես սիրում եմ ձեզ: Վստահեք Ինձ և Իմ Սուրբ Խոսքին, որը տրվում է ձեզ Իմ ժամանակների վերջի մարգարե Մարիա Աստվածային Գթասրտության միջոցով:

Ձեր Հավիտենական Հայր

Աստված Ամենաբարձրյալ

Ամեն բանի Արարիչ

Արբազան սպասավորներ, ձեզ կառաջնորդեն դեպի Կեղծ Մարգարեն

Երեքշաբթի, 17 հունվարի, 2012թ, ցերեկվա ժ 02:22

Իմ սիրելի աղջիկ, ժամանակը եկել է ասելու համար աշխարհին, **որ նախապատրաստեն իրենց հոգիները երկիր Իմ վերադարձի համար, ինչպես կանխասացվել է:**

Իմ ժողովուրդը կբարձրանա և կողջունի Ինձ երբ Ես նորից գամ, այս անգամ պահանջելու համար Ինձ պատկանող զահը որպես Մարդկության Թագավոր:

Նրանք, ովքեր ճանաչում են Իմ ձայնը, պետք է ամբողջապես Ինձ վստահեն:

Ես կառաջնորդեմ ձեզ ճշմարտության ճանապարհով, որպեսզի ձեզանից յուրաքանչյուրն **արժանի լինի մտնելու երկրի վրա Նոր Դրախտ:**

Մերժեք խավարի ձայնը, որն ամեն հնարավորության դեպքում կկուրացնի ձեզ և կգայթակղեցնի ձեզ ձեր մեջքը շրջել դեպի Ինձ:

Ես ձեր սիրող Փրկիչն եմ, ով մեռավ դաժանաբար խաչի վրա: Չնայած դրան, Իմ տառապանքը կշարունակվի այնքան ժամանակ **քանի դեռ Ես չեմ փրկել Իմ եկեղեցու մնացորդը երկրի վրա:**

Ես գալիս եմ կրկին ձեզ փրկելու: Թույլ տվեք Ինձ անել այդ առանց խոչընդոտների:

Ձեզանից այնքան շատերն են արդեն չլսելու տալիս մարդկությանն ուղղված Իմ աղերսները՝ նախապատրաստելու ձեր հոգիները Խաղաղության այս փառահեղ դարաշրջանի համար: Մի՞թե չգիտեք, որ Ես սիրում եմ ձեզ:

Ձեզանից յուրաքանչյուրի հանդեպ ունեցած Իմ կարեկից սիրո պատճառով է, որ Ես գալիս եմ, ոչ միայն պարզապես նախազգուշացնելու ձեզ, այլև օգնելու համար ձեզ, որ նախապատրաստվեք այդ մեծ պահին:

Ես հասկանում եմ, որ ձեզանից նրանք, ովքեր սիրում են Ինձ, հատկապես Իմ սրբազան սպասավորները, զգուշանում են կեղծ մարգարեների ներթափանցումից: Սա շատ կարևոր է: Եկեք հիմա և խնդրեք Ինձ, որ լցնեմ ձեզ Սուրբ Հոգով, որպեսզի ճշմարտությունը հնարավոր լինի բացահայտել և բացահայտվի ձեզ համար:

Եթե չշրջվեք դեպի Ինձ, ապա չեք կարողանա հասկանալ, թե Ես ինչ եմ ակնկալում ձեզանից:

Եկեք դեպի Ինձ: Լսեք Ինձ հիմա: Ձեր տառապանքը դժվարին կլինի, քանի որ Սատանան ձեզ նույնիսկ մի պահ հանգիստ չի տա:

Նա գիտի, որ Ես Ինձ ճանաչել եմ տալիս ոչ միայն վերջին ժամանակների Իմ մարգարե Մարիա Աստվածային Գթասրտության, այլև շատ հոգիների միջոցով: Իմ այդ հոգիները, ընտրված լինելու վերջին ժամանակների պատգամատարները, կլինեն նրանք, ում ամենաշատը Իմ սրբազան սպասավորները կխանգարեն:

Տխուր է, բայց դուք դրա փոխարեն կառաջնորդվեք դեպի խաբեբայի կողմից կեղծ մարգարեն և նրա զինակիցները, ովքեր ամենուր ստեր ու ոչ ճշմարտություններ են շաղ տալիս:

Ձեզանից նրանք, ովքեր արագ են Իմ պատգամատարներին մերժելու մեջ, չափազանց զգույշ եղեք: **Դուք, Իմ սրբազան սպասավորներ, կլինեք խաբեբայի հիմնական թիրախը:**

Առաջինը ձեր մտքերը կշրջվեն հակառակ կողմը: Քանի որ երբ դուք ձեր մեջքը շրջեք դեպի Ինձ՝ ձեր Աստվածային Փրկիչը, **այդ ժամանակ դուք սխալ ուղղությամբ կտանեք Իմ ժողովրդին:**

Ակամա դուք նրանց կխանգարեք լսել ճշմարտությունն Իմ աստվածային շրթունքներից:

Դուք կզրկեք Իմ զավակներին այն սննդից, որն էական է նրանց հոգևոր աճի համար:

Իմացեք հիմա, որ ժամանակների վերջը ձեզ վրա է: **Մի վատնեք այն ժամանակը, որն ունեք՝ ապրելով ստերի և խառնաշփոթության վակուումի մեջ:**

Մարտը սկսվել է, և Իմ մնացորդ եկեղեցին կփրկվի, քանի որ այն քայլում է Ինձ հետ դեպի Իմ Փառապանծ Նոր Թագավորություն:

Աղոթեք, որ ոչ մի հոգի ետ չմնա:

Աղոթեք նաև, որ դուք, Իմ սրբազան սպասավորներ, պատասխանատու չլինեք Իմ զավակներին ճշմարտությունից հեռացնելու մեջ: Լույսից հեռացնելու մեջ: Այն փրկությունից հեռացնելու մեջ, որը նրանց իրավունքն է:

Հետևեք Ինձ հիմա և օգնեք փրկել հոգիներ:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ. Չար պլան Վատիկանի ներսում Կաթոլիկ եկեղեցին ոչնչացնելու համար

Չորեքշաբթի, 18 հունվարի, 2012թ, առավոտյան ժ 09:50

Զավակս, տոկությունն անհրաժեշտ է Աստծո բոլոր զավակներին **աշխարհում հավատի ուրացության այս ժամանակներում:**

Այնքան քչերն են հավատում իրենց Աստվածային Արարչին՝ Ամենաբարձրյալ Աստծուն:

Շուտով նրանք կտեսնեն ճշմարտությունը, սակայն շատերը կշարունակեն վիճաբանել, թե Աստված չկա: Շատ աղոթք է պետք հիմա, զավակներս:

Պապ Բենեդիկտի դեմ դավեր են նյութվում չար սեկտի կողմից, որը հենց նրա միջանցքներում է:

Այս սեկտի գոյությունը հայտնի է Վատիկանի սրբազան սպասավորների մեջ, սակայն նրանք անուժ են այդ չար խմբի դեմ, որը դարեր շարունակ ներթափանցել է կաթոլիկ եկեղեցու մեջ:

Նրանք պատասխանատու են Իմ Որդու ուսուցումների ճշմարտությունը շրջելու համար: Այնքան քիչ է հայտնի նրանց և նրանց չար գործերի մասին:

Նրանք դուրս են մղել ճշմարիտ ուսմունքը կաթոլիկ եկեղեցուց և դրա տեղում դրել են մի գաղջ, սուզված տարբերակ, որը ստիպողաբար պարտադրվում է կաթոլիկներին վերջին քառասուն տարիների ընթացքում:

Այնքան շատ խառնաշփոթ է տարածվել այդ չար բայց թաքնված սեկտի կողմից, որ Իմ զավակները հեռացել են ճշմարիտ եկեղեցուց:

Աղոթեք, որ նրանք չհեռացնեն Պապին:

Աղոթեք, որ կեղծ մարգարեն չնստի Սուրբ Հոր (Պապի) աթոռին որ կարողանա ստեր տարածել:

Աղոթեք, որ Վատիկանի սրբազան սպասավորները այնքան ուժեղ լինեն, որ կարողանան դեմ կանգնել Կաթոլիկ եկեղեցին ավերելու այդ պլանին:

Նրանք պլանավորում են Սուրբ Երեց Բենեդիկտ XVI Պապին փոխարինել ստերի մի բռնապետով: Նա հակաքրիստոսի և նրա խմբի հետ համախմբվելով կստեղծի մի նոր եկեղեցի, որպեսզի խաբի աշխարհին:

Տխուր է, բայց Իմ զավակներից շատերը կաթոլիկ հավատի հանդեպ իրենց հավատարմությամբ կհետևեն կուրորեն այդ նոր կեղծ ուսմունքին ինչպես մորթվելու տարվող գառներ:

Արթնացեք, զավակներս, ճշմարտության հանդեպ: Այդ չար պլանը տարիներ շարունակ փոխել է կաթոլիկ ուսմունքի հիմնական վավերականությունը:

Դուք վիրավորում եք Իմ Որդուն, **երբ Սուրբ Հաղորդությունը ստանում եք ձեռքի վրա:**

Սա էր նրանց արածը:

Դուք վիրավորում եք Իմ Որդուն, երբ **չեք փնտրում կանոնավոր Սուրբ Խորհուրդները:** Սակայն նրանք, ում վրա դուք հենվում եք, նրանք չեք ապահովում ձեր հոգևոր բարեկեցությունը, որովհետև նրանք խորհուրդները մատչելի չեն դարձնում բոլորի համար:

Զավակս, Իմ Մայր Աթոռում դարեր շարունակ թաքնված մի մեծ չարիք շուտով դուրս կգա աշխարհ, որ մարդիկ տեսնեն: Իմ զավակներից նրանք, ովքեր ծածկված են Իմ Սուրբ Հոգով, կտեսնեն ճշմարտությունը, երբ աշխարհին ներկայացվի չար սուտը:

Մյուսները կուրորեն ներքև կգնան խավար արահետով:

Մեծ բաժանում կլինի քահանաների, եպիսկոպոսների, արքեպիսկոպոսների և կարդինալների միջև: Մի կողմը մյուսի դեմ:

Ճշմարիտ հետևորդները ստիպված կլինեն թաքնվել և քարոզել գաղտնաբար, այլապես կսպանվեն:

Այնքան թաքնված կլինի ճշմարիտ եկեղեցին, որ ճշմարիտ հավատացյալները ստիպված կլինեն միավորվել, որպեսզի կատարեն Իմ Հավիտենական Հոր հանդեպ նվիրվածությունը:

Երկիրը կցնցվի յուրաքանչյուր անկյունում այս ծաղրամնանության դեմ առաջացած Իմ Երկնավոր Հոր զայրույթից:

Զավակս, նրանք չեն կարող հաղթել: Քրիստոնեական հավատի մնացորդների հավատով և խիզախությամբ է, որ այդ չար խաբեբաներն ընդմիշտ կոչնչացվեն:

Սպասեք հիմա և նախապատրաստվեք, որ Կաթոլիկ եկեղեցին հայտարարի այդ փոփոխությունները:

Այդ ժամանակ դուք կիմանաք այն ճշմարտությունը, որի մասին Ես ասում եմ ձեզ:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք Բենեդիկ Պապի և նրա ճշմարիտ աշակերտների համար:

Փոր Սիրող Մայր

Մայր Փրկության

Հակաքրիստոսը, ով թաքնված է թևերի մեջ, շուտով կհայտնվի աշխարհում (Աղոթքի խաչակրաց արշավանք 20)

Հինգշաբթի, 19 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 08:30

Իմ սիրելի աղջիկ, բարձրացիր հիմա զորությամբ, որ շարունակես հռչակել Իմ ամենասուրբ խոսքը:

Նրանց, ովքեր հավատում և լսում են Իմ ամենասուրբ խոսքը, նրանք կարող են ստանալ մեծ շնորհներ Խաչակրաց արշավանքի Իմ աղոթքներն ասելով:

Քավարանը երկրի վրա, որը շուտով կզգան այն հոգիները, ովքեր ճշմարիտ կզղջան իրենց մեղքերը Նախազգուշացումից հետո, դժվար կլինի:

Քավությունը կարևոր է, զավակներս:

Մի կռվեք դրա դեմ: Ընդունեք դա:

Նրանք, ովքեր հավատաում են Ինձ, հիմա դուք պետք է լսեք: Ձեր թիվը կավելանա երբ Իմ Մեծ Գթասրտությունը ցույց կտրվաի աշխարհին, և ձեր ձայները կարձագանքեն անապատից:

Ձեր զորության և մարտնչող ոգու միջոցով է, որ **Իմ եկեղեցին կկարողանա դիմանալ հալածանքին:**

Դուք, զավակներս, վախենալու ոչինչ չունեք, երբ խոնարհորեն քայլում եք Իմ կողքով:

Ձեր խոնարհ ենթարկվածությունն էական է, որպեսզի ձեզ տրվեն այն շնորհները, որ կարողանաք ուժեղ լինել, հանգիստ մնալ և **մարտնչել Հակաքրիստոսի դեմ Իմ բանակում:**

Նա, զավակներս, թաքնված է թևերի մեջ, սակայն շուտով կհայտնվի աշխարհին:

Նա ամոթ չունի և կպարծենա իր մարդասիրական ջանքերով: Շատերը կգրավվեն նրա հմայքով, երբ նա դիմի նրանց սրտի բարությանը:

Ահա աղոթքի խաչակրաց արշավանք (20) օգնելու համար կանգնեցնել Հակաքրիստոսին Իմ զավակներին ոչնչացնելուց:

Ո՜հ, Հայր Աստված, Քո թանկագին Որդու անվամբ Ես կանչում եմ քեզ արգելելու Հակաքրիստոսին Քո զավակների սրտերը թակարդի մեջ գցելուց:

Ես խնդրում եմ քեզ, Ամենակարող Հայր, կանգնեցնել նրան Քո զավակների հանդեպ տեռոր պարտադրելուց:

Ես խնդրում եմ Քեզ կանգնեցնել նրան քո արարչությանը թունավորելուց և խնդրում եմ գալ այն խեղճ հոգիներին, ովքեր անօգնական կլինեն նրա հանդեպ:

Լսիր իմ աղոթքը, սիրելի Հայր, և փրկիր Քո բոլոր զավակներին այդ սոսկալի չարիքից:

Ձեր սիրող Հիսուս Քրիստոս

Ճշմարտության կնքված գիրքը կբացվի Իմ Երկրորդ Գալուստի նախապատրաստման համար

Ուրբաթ, 20 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 08:15

Իմ սիրելի աղջիկ, կարիք չկա անհանգստանալ մարդկային կարծիքի համար:

Մարդկության կարծիքները ոչինչ են համեմատած քեզ տրվող Իմ Սուրբ խոսքերի հետ:

Իմ խոսքն առաջինն է: Իմ խոսքին հակառակ ոչ մի այլ կարծիք չպետք է մտահոգի քեզ:

Ժամանակը, աղջիկս, հիմա շատ կարճ է, որ Ես փրկեմ մարդկությունը:

Աղջիկս, հիմա այնքան շատ բան կակնկալվի քեզնից այնքան արագորեն, որ ի վիճակի չես լինի շունչդ տեղը բերելու:

Հիմա քեզ շատ հայտնություններ են տրվում, որպեսզի Իմ զավակներն իմանան, թե ինչպես հարկը եղածին պես նախապատրաստվեն:

Եթե թույլ տաս ուշադրության շեղումներ, ինչպես ասենք, որ մարդկանց կարծիքներն ու տեսակետները անտեղի զբաղեցնեն քո ժամանակը, ապա դա քեզ կհեռացնի այն աշխատանքից, որը ճշմարտապես կարևոր է:

Թույլ տուր Ինձ լցնելու քզե սիրով և սփոփանքով այս ժամանակ, աղջիկս:

Նախազգուշացումը շատ մոտ է: Հենց որ Իմ գթասրտության ճառագայթները պարուրեն ամբողջ աշխարհը, բոլորը, ովքեր հավատում են Ինձ, կապաշխարեն:

Նրանք, ովքեր մերժում են քեզ տրվող Իմ պատգամները, և սիրում են Ինձ, կշրջվեն դեպի Իմ Սուրբ Սիրտը սիրով և ուրախությամբ իրենց հոգիների մեջ:

Հենց որ նախազգուշացումը տեղի ունենա, մի շարք իրադարձություններ կկատարվեն:

Հակաքրիստոսը և նրա խումբը, չնայած թուլացած գլոբալ խոստովանությունից հետո, **կսկսեն պլանավորել ներսից Իմ Սուրբ Եկեղեցու զավթումը:**

Իմ բանակը կգրավի դիրքերը և կսկսի մարտնչել փրկելու համար Սուրբ Կաթոլիկ Եկեղեցին ավերումից: **Նրանք, կեղծ մարգարեն և նրա հետևորդները, չեն հաղթի,** աղջիկս, բայց ինչպես եմ Ես լալիս Իմ այն սրբազան սպասավորների համար, ովքեր կընկնեն ճանապահից:

Այնքան մոլորված կլինեն նրանք, որ կկարծեն թե հետևում են ուղղափառ Կաթոլիկ Եկեղեցուն:

Իրականում նրանք կկանգնեն **կեղծ մարգարեի կողմը, ով կղեկավարի Իմ Մայր Աթոռը հպարտությամբ և արհամարհանքով իր սրտում:**

Դու. Աղջիկս, պետք է խնդրես Իմ զավակներին սրտանց աղոթել, որպեսզի այս ավերածությունը մեղմացվի:

Ես աղոթքների կարիք ունեմ փրկելու համար Իմ սխալված քահանաներին, եպիսկոպոսներին և կարդինալներին, ովքեր կույր են ճշմարտության հանդեպ:

Պետրոսի Սուրբ նստավայրը կպոծվի սատանայի ընկած հրեշտակների կողմից, միավորված **հակաքրիստոսի և նրա զանազան կազմակերպությունների հետ:**

Բոլորը մեկ են, աղջիկս, սատանայից սերված:

Ես գիտեմ, որ դա վախեցնող է, բայց դա երկար չի տևի: Աղոթքը, շատ աղոթքը կթեթևացնի և կօգնի կասեցնել այդ իրադարձությունները:

Նախապատրաստեք ձեր հոգիները հիմա, զավակներս, գնալով խոստովանության, եթե կաթոլիկ եք, որքան կարող եք շուտ: Այլ կերպ, Ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ սրտի մաքրությամբ թողություն փնտրել ձեր մեղքերի համար:

Սա կթեթևացնի ձեր զղջման տառապանքը Նախազգուշացման ժամանակ: Դրանից հետո դուք պետք է աղոթեք երկրի վրա խաղաղության համար:

Իմ Երկրորդ Գալուստի համար նախապատրաստությունները կսկսվեն անմիջապես նախազգուշացման տեղի ունենալուց հետո:

Ճշմարտության կնքված գիրքը կբացվի, և քո միջոցով բացահայտված գաղտնիքները, աղջիկս, ողջ աշխարհին տեսնելու համար:

Ճշմարտության Իմ գիրքը կտրվի աշխարհին, որպեսզի ձեր հոգիները մաքրագործվեն Ինձ հետ միության մեջ:

Միայն այդ ժամանակ դուք պատրաստ կլինեք Ինձ հետ գալու դեպի **Իմ Հոր Աստվածային Կամքի** Նոր Դարաշրջանը, **Խաղաղության Դարաշրջանը, երկրի վրա Իմ նոր Դրախտը:**

Ձեր սիրող Հիսուս

Մարդկության Փրկիչ

Կեղծ մարգարեն կընկալվի որպես սուրբ: Նրանք, ովքեր դեմ կլինեն նրան, կհամարվեն հերետիկոս

Շաբաթ, 21 հունվարի, 2012թ, ցերեկվա ժ 01:15

Իմ սիրելի աղջիկ, աշխարհում Իմ պատգամատարներից յուրաքանչյուրին, ովքեր նշանակվել են Իմ Սուրբ խոսքը տարածելու համար, տրվել է տարբեր դեր: Դրանցից ոչ մեկը նույնը չէ:

Ահա թե ինչու Իմ պատգամատարները երբեք չպետք է շփոթեն յուրաքանչյուր պատգամը, դրանք միմյանց հետ համեմատելով:

Դու, աղջիկս, որպես յոթերորդ պատգամատար, ընտրվել ես Իմ զավակներին ճշմարտության մասին տեղեկացնելու համար: Իմ ճշմարտության շատ մաս է տրվել քեզ արդեն, սակայն հիմա շատ ավելին կտրվի:

Սրանց մեջ պարունակվող գաղտնիքների պատճառով քեզ կծաղրեն, ծաղր ու ծանակի կենթարկեն և հիմարի տեղ կդնեն, երբ այդ գաղտնիքները բացահայտվեն:

Այս պատգամները նրա համար են, որպեսզի օգնեն մաքրագործելու Իմ ժողովրդին, ներառյալ նրանց, ովքեր ընդունում են Ինձ հետևելու կանչը, ինչպես նաև այն հոգիներին, ովքեր դատարկ են սիրուց և սառն են սրտով:

Առանց այս մաքրման երկիրը չի կարող մաքրագործվել: Այն մաքրագործման կարիք ունի, որպեսզի արժանի լինի, որ Ես նորից քայլեմ նրա վրա:

Իմ զավակները պետք է ուրախանան: Վախն Ինձնից չի գալիս:

Վախը գալիս է չարից: Սակայն դուք ներում կստանաք և կարդարացվեք, երբ վախենում եք այն հոգիների համար, ովքեր քայլում են կուրորեն: Ոչ թե նրա համար, որ նրանք չեն կարող տեսնել, այլ որովհետև նրանք ընտրում են չտեսնել:

Ձեր պարտքը Իմ հանդեպ, Իմ հետևորդների սիրելի բանակ, Ինձ օգնելն է նախապատրաստելու համար ճանապարհը **երկրի վրա Իմ գալիք Աստվածային Թագավորության համար:**

Ես ձեր օգնության կարիքն ունեմ: Ես ձեր աղոթքների կարիքն ունեմ: Ձեր աղոթքները կթուլացնեն հակաքրիստոսի գործը, ինչպես նաև **կեղծ մարգարեինը, ով կնստի Հռոմի Մայր Աթոռում:**

Իմ բոլոր զավակներին, դուք պետք է իմանաք, որ Ես ամենաներող եմ: Նույնիսկ նրանք, ովքեր ներգարավված են սատանայական խմբերի մեջ, ում մասին Ես խոսում եմ, կարող են փրկվել ավելի ներքև իջնելուց դեպի դժոխքի դարպասները:

Մեղքը կարող է թուլանալ աղոթքի պատճառով: **Կարիք չկա որ դուք գնաք մարտի ձեր բռունցքները բարձրացրած, դուք միայն պետք է աղոթեք:**

Իմ Նոր Դրախտը հոյակապ է, զավակներս: Այնքան շատ նախապատրաստություններ են ավարտվել այն նույն հրաշքներով, ինչպես ներկայացվել էին Ադամին և Եվային, որը նրանք մերժեցին մեղքի միջոցով: Ամեն ինչ պատրաստ է:

Դուք, Իմ հետևորդներ, կօգտվեք երկրի վրա Իմ Նար Դրախտից, որի վրա Ես կթագավորեմ:

Որովհետև դուք այս սերնդից ընտրվել եք վայելելու այս Դրախտը, դուք չպետք է կանգ առնեք ձեր աշխատանքում՝ **օգնելու Ինձ, որ Իմ բոլոր զավակներին տանեմ դեպի Իմ Փառահեղ Թագավորություն:**

Զավակներս, այնուամենայնիվ իմացեք, որ կեղծ մարգարեն **կստիպի ձեզ հավատալ, որ ինքը նույնպես ձեզ համար նախապատրաստում է նման Դրախտ:**

Նրա ստերը կհպատակեցնեն կաթոլիկ հետևորդների միամիտ խմբի: Նա կներկայացնի մի հրաշալի և սիրող արտաքին խարիզմ, և կաթոլիկ եկեղեցում Իմ բոլոր զավակները շփոթության կմատնվեն:

Նշանը, որ դուք պետք է փնտրեք, նրա հպարտությունն ու ամբարտավանությունն է արտաքին կեղծ խոնարհության տակ: Իմ զավակներն այնքան հիմարացած կլինեն, որ կկարծեն թե նա մի բացառիկ և մաքուր հոգի է:

Նրա հետ կվարվեն ինչպես մի կենդանի սրբի: Նրա բերանից դուրս եկող ոչ մի բառ հարցականի տակ չի դրվի:

Նա կերևա նաև որպես գերբնական ունակություններ ունեցող, և մարդիկ միանգամից կհավատան, որ նա կարող է հրաշքներ գործել: Նրանք, ովքեր դեմ կլինեն նրան, **քննադատության կենթարկվեն և կհամարվեն հերետիկոսներ:**

Այդ բոլոր հոգիներին, **որ կմեղադրվեն հերետիկոսության մեջ, մի կողմ կնետեն և նրանցով կկերակրեն շներին:**

Իմ ուսուցումների վերաբերյալ ողջ ճշմարտությունը կշրջվի: Ամեն ինչ կլինի սուտ: Սկզբում հալածանքը կծավալվի դանդաղորեն և աննկատելի:

Իմ ճշմարիտ Սրբազան Սպասավորները **ստիպված կլինեն պատարագ մատուցել գաղտնաբար և շատ դեպքերում ոչ կաթոլիկ եկեղեցիներում:**

Նրանք ստիպված կլինեն պատարագ մատուցել ապաստաններում: Զավակներս, երբ սա տեղի ունենա, դուք չպետք է հույսներդ կորցնեք: Սա վերջ կունենա կարճ ժամանակից:

Պարզապես աղոթեք այն հոգիների համար, ովքեր Կեղծ Մարգարեին իրենց հավատարմության մեջ մոռանում են **Օրինյալ Երրորդության մասին, որը հենց այն հիմքն է, որի վրա կառուցված է Կաթոլիկ Եկեղեցին:**

Շատ կրոններ հետևում են Սուրբ Երրորդության մեկ անձին միայն: Ոմանք պատվում են Հորը: Մյուսները՝ Որդուն: Բայց բոլորն էլ նույնն են, աղջիկս:

Միայն մեկ ճշմարիտ Աստված կա: Դա Հայրն է, Որդին և Սուրբ Հոգին**, երեք առանձին անձեր բոլորը մեկ աստվածային էության մեջ:** Շուտով բոլոր կրոններին կտրվի ճշմարտությունը, և շատերը կընդունեն այս սուրբ առեղծվածը:

Հետևեք Ինձ դեպի ձեր փրկության արահետը, Իմ հետևորդներ, քանի որ դուք փառահեղ ապագա ունեք առջևում, բայց դուք պետք է ուժեղ մնաք:

Սա է ընտրյալ սերունդը Երկրի վրա Իմ Նոր Դրախտի համար:

Մի մերժեք կյանքի այս փառահեղ ընծան, որը փայլում է իր ողջ ճոխությամբ: Ոչ մի հոգի ոչ մի բանի կարիք չի ունենա: Երկրի վրա Իմ Նոր Դրախտը կլինի խաղաղության և երջանկության դարաշրջան առանց մեղքի:

Սա Իմ Հոր աստվածային կամքն է, և Նրա խոստումն է եղել մարդկությանը սկզբից ի վեր:

Ուրախ և երջանիկ եղեք, քանի որ շատ բան ունեք ակնկալելու, զավակներս:

Առջևում սպասվող փորձությունները կխամրեն , երբ տեսնեք այն փառահեղ Թագավորությունը, որը սպասվում է ձեզ:

Ես սիրում եմ ձեզ, զավակներս: Ես գիտեմ, որ դուք սիրում եք Ինձ: Այդ պատճառով Ես խնդրում եմ ձեզ սեր ցույց տալ նրանց, ովքեր կույր են Իմ Սուրբ Հոգու հանդեպ:

Աղոթեք նրանց համար յուրաքանչյուր հնարավորության դեպքում, որպեսզի նրանք կարողանան նորից տեսնել մարդկությանը տրված Իմ խոստումի ճշմարտությունը, երբ Ես մեռա՝ ապահովելու համար ձեր հավիտենական փրկությունը:

Ձեր սիրող Հիսուս

Ողջ մարդկության Փրկիչ

Լսեք Իմ հրատապ աղերսը՝ աղոթելու աթեիստների հոգու համար

Երկուշաբթի, 23 հունվարի, 2012թ, ցերեկվա ժ 03:20

Իմ սիրելի աղջիկ, աշխարհը անճանաչելության աստիճանի փոխվելու առաջ է:

Քանի որ Իմ ժամանակն արդեն համարյա հասել է:

Ես կոչ եմ անում բոլոր Ինձ՝ իրենց Աստվածային Փրկչին և Իմ Հավիտենական Հորը հավատացողներին, կանգ առնել այն ամենից, ինչ անում եք, և լսել:

Անկախ նրանից հավատում եք թե ոչ այս ժամանակների համար աշխարհին տրվող Իմ պատգամներին, լսեք հիմա Իմ հրատապ աղերսը:

Աղոթեք, աղոթեք և աղոթեք Իմ հանդեպ ձեր սրտում ունեցած ողջ սիրով աթեիստների հոգիների համար:

Շատերը կմեռնեն Նախազգուշացման ընթացքում:

Շատերը հնարավորություն չեն ունենա ապաշխարել ժամանակին:

Ես կոչ եմ անում ձեզ առաջարկել ձեր ողջ տառապանքը և աղոթքները այդ հոգիների համար, որպեսզի Ես կարողանամ փրկել նրանց դժոխքի կրակներից:

Աղոթեք նրանց համար, ովքեր չեն շրջվի դեպի Ինձ նույնիսկ այն ժամանակ, երբ ճշմարտությունը ներկայացվի նրանց:

Աղոթեք նաև նրանց համար, ովքեր իրենց **քավարանը կանցնեն երկրի վրա,** այն պատիժը, որը նրանք կընդունեն բարի սրտով, շատ դժվար կլինի:

Շատերի համար այն չափազանց ցավոտ կլինի:

Աղոթեք, որ նրանք ստանան այն ուժը, որի կարիքն ունեն դիմանալու համար:

Գնացեք, զավակներս և արեք ամեն ինչ, որ Ես խնդրում եմ ձեզանից, քանի որ չափազանց քիչ ժամանակ է մնացել:

Ես սիրում եմ ձեզ: **Հիշեք, որ վախենալու ոչինչ չկա, եթե Ինձ սիրում եք:**

Պարզապես աղոթեք նրանց համար, ովքեր մերժում են Ինձ հիմա այսօր, և նրանց համար, ովքեր իրենց մեջքը կշրջեն ճշմարտության հանդեպ:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Լավ նորություն – Աստված՝ Իմ Հավիտենական Հայրը, վավերացրել է մարդկության մեծ մասի փրկությունը

Երեքշաբթի, 24 հունվարի, 2012թ, ցերեկվա ժ 04:55

Իմ սիրելի աղջիկ, այդ Ես եմ՝ Հիսուսը, ով գալիս է այսօր քեզ մոտ՝ հայտնելու քեզ աշխարհին տրվելիք բարի նորությունը:

Երկրի վրա Իմ շատ ընտրյալ հոգիների կողմից առաջարկված աղոթքներն ու տառապանքները նշանակում են, որ հիմա շատ ու շատ ավելի Աստծո զավակներ կարող են փրկվել:

Եթե հասկանաք զոհաբերության և աղոթքի ուժի, զավակներս, դուք երբեք չեք դադարի աղոթելուց:

Աստված՝ Իմ Հավիտենական Հայրը, **վավերացրել է մարդկության մեծ մասի փրկությունը:**

Սա նշանակում է, որ Նախազգուշացման ընթացքում շատերը դարձի կգան, իսկ նրանք, ովքեր դարձի չեն գա, կարող են փրկվել աղոթքի ուժի պատճառով:

Դա չի նշանակում, որ բոլորը կարող են փրկվել, որովհետև, տխուր է, բայց նրանք չեն փրկվի:

Այդ կարծրացած մարդիկ, ում նվիրվածությունը առաջին հերթին սատանային ու աշխարհում նրա կողմից վերահսկվող չար աղանդներին է, չեն ցանկանա փրկվել:

Դրա փոխարեն նրանք կընտրեն տարբեր Դրախտ: Մի դրախտ, որ նրանց հավատացնում են, թե գոյություն ունի Իմ Հոր կողմից մարդկությանը խոստացված դրախտից դուրս:

Այդ կեղծ Դրախտը, որին **հավատում են գազանի սատանայական հետևորդները, գոյություն չունի:**

Այս ստեղծվել է սատանայի կողմից իր աշակերտների մտքերի մեջ, և պարզապես պատրանք է: Այնքան շատ բան է խոստացված:

Խավար հոգիները հավատում են այլ (տարբեր) տիեզերքի, այլ էության, ուր Աստված գոյություն չունի:

Նրանք հավատում են կյանքի այլ ձևերի, այլ արարածների և խաղաղ ռեժիմի, որն ամբողջովին հիմնված է ստի վրա:

Դրանցից ոչ մեկն իրական չէ, զավակներս: Այն գոյություն չունի, ոչ էլ կարող է գոյություն ունենալ, որովհետև այն չի ստեղծվել Իմ Հոր կողմից:

Աստված՝ Ամենակարող Հայրը ստեղծել է ողջ տիեզերքը՝ աստղերը, մոլորակները և երկիրը, ինչպես նաև նրանց միջև տարածությունները:

Աղոթեք նրանց համար, ովքեր հետևում են այդպիսի պաշտամունքների:

Աղոթեք, քանի որ Իմ զավակներից շատերն են ցավի մեջ գտնվելու պատճառով փնտրում այս հոգևոր միջոցները, որոնք Աստծուց չեն:

Աղոթեք հիմա շնորհակալությամբ այս յուրահատուկ ընծայի համար, որը հիմա առաջարկվում է մարդկությանը Իմ Հոր կողմից այս աղոթքի խաչակրաց արշավանք 21 -ում

<<Մենք գովաբանում ենք Քեզ և շնորհակալություն հայտնում Քեզ,

Ով Սուրբ Աստված, մարդկության ամենակարող Արարիչ, այն սիրո և կարեկցանքի համար, որը Դու ունես մարդկության հանդեպ,

Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ փրկության ընծայի համար, որը դու հեղում ես Քո խեղճ զավակների վրա,

Մենք աղերսում ենք Քեզ, ով Տեր, որ փրկես բոլոր նրանց, ովքեր հետևում են չարին,

և որ նրանց սրտերը բացվի հավիտենական կյանքի ճշմարտության հանդեպ:

Ամեն:

Ուրախացեք, զավակներս, այս մեծ ընծայի համար:

Բայց դուք դեռևս շատ գործ ունեք անելու հոգիներին օգնելու համար, քանի որ ձեր եղբայրներից ու քույրերից շատերը կմնան համառորեն հակադրված Իմ Սուրբ խոսքին:

Ձեր սիրող Հիսուս

Ողջ մարդկության Փրկիչ

Կույս Մարիամ. Ատոմային պատերազմ է նյութվում ներգրավելով Իրանը

Չորեքշաբթի, 25 հունվարի, 2012թ., ցերակվա ժ 01:50

Զավակս, հիմա աշխարհում շատ բան է տեղի ունենում, մինչ սատանայի բանակը շարունակում է ամենուր ավերածություն տարածել:

Նրանք փորձում են վերցնել բոլոր ֆինանսական հաստատությունների վերահսկողությունը, որ կարողանան սարսափելի չարագործություն կատարել Իմ զավակների հանդեպ:

Նրանք, ագահության և իշխանության կողմից ղեկավարվող չար խումբը, փորձում են նաև առաջ բերել ատոմային պատերազմ Իրանում:

Դու, զավակս, պետք է աղոթես, որ Հայր Աստված, Իր Մեծ գթասրտությամբ, **բացի նրանց սրտերը, որ այս բաները տեղի չունենան:**

Երբեք հավատներդ մի կորցրեք, զավակներս, որովհետև ձեր աղոթքներն աշխատում են:

Հիմա աշխարհում սկսում են թուլանալ մեծ չարիքները, ներառյալ աբորտը, էվթանազիան, անառակությունը և սեռական այլասերվածությունը:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք Իմ ամենասուրբ Վարդարանը, զավակներս, խմբերով ամենուրեք եթե հնարավոր է:

Սատանան արագորեն կորցնում է իր ուժը, մինչ Իմ կրունկը ճզմում է օձի գլուխը:

Արդեն շատ ժամանակ չի անցնի նախքան Իմ Որդին կհայտնվի երկրի վրա:

Սկզբում նա ձեզ կտա դարձի գալու այս վերջին հնարավորությունը:

Հետո Նա արագորեն կնախապատրաստի աշխարհը Իր Երկրորդ Գալուստի համար:

Ժամանակը կարճ է հիմա:

Աղոթքը այն զենքն է, զավակներս, որ հեռու կպահի սատանայի բանակը այն վերջնական հալածանքից, որը նրանք պլանավորում են մարդկության դեմ:

Հիշեք, որ Իմ Հավիտենական Հայրը Իր սիրով և կարեկցանքով կպաշտպանի ձեզ բոլորիդ,ովքեր հավատում են Նրան:

Նրանք, ովքեր կշարունակեն չենթարկվեն Նրան և մերժել Իմ Սիրելի Որդու գոյության ճշմարտությունը, աղոթեք, աղոթեք, աղոթեք նրանց փրկության համար:

Ժամանակը պատրաստ է: Բացեք ձեր սրտերը Իմ որդու Աստվածային Գթասրտության հանդեպ:

Երկինքը կսկսի փոխվել հիմա, իսկ հետո բոլորը կտեսնեն այս մեծ հրաշքը իրենց առջև կատարվելիս:

Պատրաստ եղեք:

Նախապատրաստեք ձեր տները և աղոթեք Իմ սուրբ վարդարանը ամեն հնարավորության դեպքում, որ թուլացնեք չարի ճանկը:

Ձեր սիրող Մայր

Մայր Փրկության

Ֆաթիմայի վերջին գաղտնիքը բացահայտում է, որ սատանայի չար աղանդի մուտքը Վատիկան ճիշտ է

Հինգշաբթի, 26 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 09:40

Իմ սիրելի աղջիկ, **ժամանակն է, որ աշխարհին բացահայտվի Աստվածային Թագավորության առեղծվածների ողջ ճշմարտությունը:**

Ճշմարտությունը թաքնված է եղել որոշ ժամանակ: Տարիներ շարունակ Իմ Եկեղեցին մի կողմ է հրել աշխարհում Իմ հրաշքների, երևումների և ընտրյալ հոգիների հետ աստվածային հաղորդակցության ձևով աստվածային միջամտության ընդունման ճանաչումը:

Միայն Իմ Եկեղեցուն է հայտնի, թե ինչու նա կարիք ուներ ծածկել ճշմարտությունը, երբ անհրաժեշտ էր ամենուր ուժեղացնել Իմ զավակների հավատը:

Իմ և Իմ Օրհնյալ Մոր բոլոր ճշմարիտ տեսանողները սկզբում անտեսվել և արհամարհանքի են արժանացել Իմ Եկեղեցու կողմից:

Աղջիկս, նույնիսկ Ֆաթիմայի վերջին գաղտնիքը չտրվեց աշխարհին, քանի որ այն բացահայտում էր ճշմարտությունն այն մասին, որ սատանայի չար աղանդը մտնում է Վատիկան:

Գաղտնիքի վերջին մասը չի բացահայտվել, որպեսզի պաշտպանեն այն չար աղանդը, ովքեր մտել են Վատիկան մեծ թվով, սկսած Ֆաթիմայի սրբավայրում Իմ Մոր երևումների ժամանակից:

Իմ դուստր Լուսիան լռեցվեց այն ուժերի կողմից, որոնք վերահսկում են Վատիկանի մի մասը, որի վրա Իմ խեղճ սիրելի Պապերը քիչ հսկողություն ունեն:

Տես, թե ինչպես են նրանք ոչ միայն շրջել Իմ ուսուցումների ճշմարտությունը, այլև ներմուծել են **կաթոլիկ պաշտամունքի նոր մեթոդներ, որոնք վիրավորում են Ինձ և Իմ Հավիտենական Հորը:**

Կաթոլիկ եկեղեցին միակ ճշմարիտ եկեղեցին է և որպես այդպիսին սատանայի և նրա չար աղանդի առաջին թիրախը:

Ճշմարտությունը գալիս է Ինձնից:

Ճշմարտությունը հարմար չէ մարդկությանը, որովհետև այն կարող է ներառել անձնական զոհաբերություն:

Ճշմարտությունը որոշ դեպքերում բարկություն է առաջացնում, իսկ շատ դեպքերում դիտվում է որպես հերետիկոսություն:

Չնայած դրան, միայն ճշմարտությունը կարող է ձեզ ազատ արձակել ստերից: Այն ստերից, որոնք գալիս են սատանայից և որոնք ծանր բեռ են ստեղծում ձեր հոգու վրա:

Եկել է ժամանակը, որ ճշմարտությունը քողազերծվի աշխարհի համար, որը լի է ստերով:

Այնքան շատ ստեր են ներկայացվել Իմ զավակներին, աղջիկս, կեղծ կրոնների, կեղծ Աստվածների, կեղծ եկեղեցական առաջնորդների, կեղծ քաղաքական առաջնորդների և կազմակերպությունների, ինչպես նաև կեղծ լրատվամիջոցների միջոցով:

Այնքան շատ ճշմարտություն է թաքցված: Սակայն եթե այսօրվա աշխարհում կատարվող իրադարձությունների ճշմարտությունը բացահայտվեր նրանց, շատ քչերը կընդունեին այն:

Նույնը վերաբերում է Իմ Հոր Տասը Պատվիրաններին: Դրանք Իմ Հավիտենական Հոր կողմից դրված կանոններն են և տրվել են Նրա մարգարե Մովսեսին:

Ճշմարտությունը երբեք չի փոխվում, անկախ նրանից, թե մարդկությունը որքան է փորձում փոխել այն:

Իմ Հոր Պատվիրաններն արդեն չեն ընդունվում նույնիսկ քրիստոնեական եկեղեցիների կողմից:

Մի սպանիր, նշանակում է, որ չես կարող սպանել մեկ այլ մարդկային արարածի: Դա չի վերաբերում ինքնապաշտպանությանը, այլ մնացած բոլոր դեպքերի համար է:

Ոչ մի մարդ չի կարող արդարացնել սպանությունը – աբորտը, մահապատիժը կամ էվթանազիան: Ոչ մեկը:

Սա մահացու մեղք է, իսկ դրա պատիժը հավիտենական կյանքն է դժոխքում:

Արդյո՞ք Իմ զավակներն ընդունում են սա, աղջիկս: Ոչ, նրանք նույնիսկ օրենքներ են ընդունում, որոնք այն ոչ միայն ընդունելի են դարձնում, այլև ներելի Աստծո աչքում: Բայց դա այդպես չէ:

Իմ Հոր բոլոր Տասը Պատվիրանները խախտվում են ամեն օր:

Չնայած դրան, Իմ եկեղեցին երբեք չի քարոզում մեղքի լրջության մասին: Նրանք երբեք չեն ասում մարդկանց, որ նրանք դժոխք կգնան, եթե մահացու մեղք գործեն, եթե ճշմարտ չեն զղջում դրա համար:

Իմ սիրտը խորապես վիրավորված է:

Նրանք, Իմ եկեղեցիները ողջ աշխարհում, չեն քարոզում ճշմարտությունը:

Իմ սրբազան սպասավորներից շատերն արդեն չեն հավատում դդժոխքի կամ քավարանի գոյությանը:

Նրանք չեն ընդունում Իմ Հոր Պատվիրանները: Նրանք արդարացնում են յուրաքանչյուր մեղք:

Նրանք խոսում են Իմ Հոր գթասրտության մասին, բայց չեն կարողանում բացատրել մահացու մեղքի մեջ մեռնելու հետևանքը: Նրանք մեծապես վիրավորում են Ինձ՝ չկատարելով այն պարտավորությունները, որոնց համար նշանակվել են:

Շատ դեպքերում նրանք պատասխանատու են բազմաթիվ հոգիների կորստյան համար:

Արթնացեք ճշմարտության հանդեպ դուք բոլորդ ովքեր ինքներդ ձեզ համարում եք Ամենակարող Հայր Աստծուն՝ ամեն բանի Արարչին հավատացողներ, և իմացեք հետևյալը.

Միայն մեկ ճշմարտություն կա:

Չի կարող լինել մեկից ավելի ճշմարտություն:

Ճշմարտությունից դուրս ամեն ինչ սուտ է և չի գալիս Իմ Երկնավոր Հորից՝ Աստծուց, ամեն բանի Ամենակարող Արարչից:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Կոչ հոգևորականներին. Նախապատրաստեք Իմ հոտը Իմ Երկրորդ Գալուստի համար երկիր

Ուրբաթ, 27 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 11:50

Ես ձեր սիրող Հիսուսն եմ՝ Ամենաբարձրյալ Աստծո Որդին ծնված Անարատ Կույս Մարիամից:

Իմ սիրելի աղջիկ, երբեք մի մոռացիր, որ երբ աշխատում ես Ինձ համար, դու հալածանքի կենթարկվես, քանի որ մարդկությունը չի ցանկանա լսել ճշմարտությունն այնպես, ինչպես Ես եմ բացահայտում քեզ այս վերջին ժամանակներում:

Իմ սուրբ խոսքն այնքան երկար ժամանակ է կարճվել, բայց այլևս այդպես չի լինի:

Իմ ձայնը կլսվի ողջ աշխարհում: Իմ սերը կբացահայտվի Իմ ողջ Փառքով, և մարդը, վերջապես, կկարողանա ազատագրվել իր կոճերի շուրջը Սատանայի կողմից դրված չարի կապանքներից:

Մինչ ճշմարտությունը կներթափանցի Իմ զավակների հոգիների մեջ և կբերի նրանց այն ազատությունը, որին նրանք սպասել են այդքան երկար ժամանակ, դժբախտաբար, այն բաժանում կառաջացնի:

Կաթոլիկ եկեղեցու Իմ սիրելի սրբազան սպասավորներ, քահանաներ և բոլոր հոգևորականներ, իմացեք, որ Ես սիրում եմ ձեզ բոլորիդ:

Ձեզանից այնքան շատերն են իրենց կյանքը տվել Ինձ համար սրտի առատաձեռնությամբ:**Հ իմա դուք պետք է հենվեք Ինձ վրա:**

Դուք պետք է աղոթեք առաջնորդության համար, որպեսզի միշտ ուժեղ մնաք ձեր հավատի և զանանության մեջ:

Երբեք ձեր աչքերը Ինձնից մի հեռացրեք նույնիսկ մի պահ:

Ես կարիք ունեմ, որ դուք նախապատրաստեք Իմ հոտը Ինձ ողջունելու համար Իմ այնքան երկար սպասված Երկրորդ Գալուստի ժամանակ երկիր:

Դուք պետք է տոկուն լինեք և թույլ չտաք, որ Իմ հանդեպ եր ունեցած սերը փոխվի, անկախ նրանից թե որքան ճնշմատ կենթարկվեք:

Դուք Իմ ճշմարիտ աշակերտներն եք, և Ես պետք է կոչ անեմ ձեզ, որ վերցնեք ձեր զենքերը՝ փրկելու համար Իմ Եկեղեցին: **Այն Եկեղեցին, որը հիմնադրվեց Իմ սիրելի աշակերտ Պետրոսի վրա, երբեք չի կործանվի:**

Թշնամին հավատացած կլինի, թե ոչնչացրել է նրան, բայց **դա հիմար ենթադրություն կլինի:**

Ոչ մեկը չի ոչնչացնի, ոչ էլ կարող է ոչնչացնել Իմ Եկեղեցին: Մոխիրներից այն վեր կբարձրանա Իմ Փառքը հռչակելու համար, **երբ Ես ետ կգամ որ փրկեմ Իմ Թագավորությունը երկրի վրա:**

Դուք երբեք չպետք է լքեք Ինձ՝ ձեր սիրող Փրկչին, երբեք:

Քանի որ առանց Ինձ լույս չկա: Առանց լույսի ապագա չկա:

Աղջիկս, Ես տալիս եմ աշխարհին աղոթքի այս (22) խաչակրաց արշավանքը, որպեսզի կաթոլիկ հոգևորականությունն ասի.

Ո՜հ Իմ սիրելի Հիսուս

Ուժեղ պահիր ինձ և Քո հանդեպ իմ ունեցած սիրո բոցը՝ վառ

Օրվա յուրաքանչյուր պահի

Երբեք թույլ մի տուր որ Քո հանդեպ եղած սիրո բոցը երերա կամ հանգչի

Երբեք թույլ մի տուր ինձ թուլանալ գայթակղության ներկայությամբ

Տուր ինձ շնորհները, որոնք անհրաժեշտ են պատվելու համար իմ կոչումը, իմ նվիրվածությունը, իմ հավատարմությունը

Եվ վեր պահելու Ուղղափառ Կաթոլիկ Եկեղեցու ուսուցումները

Ես առաջարկում եմ Քեզ իմ հավատարմությունը միշտ

Ես իմ նվիրաբերումն եմ երաշխավորում կռվելու Քո բանակում

Որպեսզի Կաթոլիկ Եկեղեցին կարողանա նորից բարձրանալ փառքով

Ողջունելու Քեզ սիրելի Հիսուս, երբ Դու նորից գաս:

ԱՄԵՆ

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ողջ մարդկության Թագավոր

Կույս Մարիամ. Աղոթեք Բենեդիկտ Պապի համար ամբողջ սրտով

Շաբաթ, 28 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 09:00

Զավակս, Սատանայի ուժը օրեցօր թուլանում է այն օրից սկսած, ինչ Սուրբ Հոգին շարունակում է տարածել Իր թևերը Աստծո բոլոր զավակների վրա;
Աստծո հանդեպ հավատը և սերը աճում է ամենուրեք, Հոր՝ Ամենաբարձրյալ Աստծո կողմից իր զավակներին տրված յուրահատուկ շնորհների պատճառով: Գուցե իմ զավակներից շատերը չեն գիտակցում դա, բայց դուք կհասկանաք, եթե բացեք ձեր աչքերը:

Խնդրում եմ, զավակս, դու պետք է աղոթես Բենեդիկ Պապի համար ամբողջ սրտով: Նա այնքան շատ է տառապում և այնքան միայնակ է շատ հարցերում՝ վշտանալով ուրացության պատճառով, որը նա տեսնում է Վատիկանի ներսում և դրսում:

Վատիկանում նրա գտնվելու օրերը երկարացվել են, և այդ պատճառով չարի կողմից պատճառված ավերածությունների մեծ մասից հնարավոր է եղել խուսափել:

Աղոթքը, զավակներս, նման է որոտումի երկնքում: Ձեր աղոթքները լսվում են Երկնքում, և դրանց պատասխան է տրվում, զավակներս:

Սա լավ է: Շարունակիր աղոթել քեզ տրված խաչակրաց արշավանքի աղոթքները, զավակս:

Ահա մի հատուկ խաչակրաց արշավանքի աղոթք (23) Բենեկդիկտ Պապի ապահովության համար.

Ո՜հ Իմ Հավիտենական Հայր, հանուն Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի

և այն տառապանքի, որը Նա կրեց աշխարհը մեղքից փրկելու համար

ես հիմա աղոթում եմ, որ Դու պաշտպանես Քո Սուրբ Երեց Բենեդիկտ Պապին՝ երկրի վրա Քո Եկեղեցու գլխավորին

Որպեսզի նա նույնպես կարողանա օգնել փրկելու Քո զավակներին և սրբազան սպասավորներին

Սատանայի մտրակից և ընկած հրեշտակների իշխանությունից, ովքեր քայլում են երկրի վրա՝ հոգիներ գողանալով

Ով Հայր, պաշտպանիր Քո Պապին, որպեսզի Քո զավակները կարողանան

Առաջնորդություն ստանալ դեպի Քո Նոր Դրախտը երկրի վրա:

Ամեն:

Ձեր Երկնավոր Թագուհի Երկրի

Մայր Փրկության

Իմ Աստվածային Գթասրտությունը պետք է հասկանալ այնպես, ինչպես բացահայտվել է սուրբ Ֆաուստինային

Կիրակի, 29 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 09:18

Ես՝ ձեր Հիսուսը, ցանկանում եմ հայտնել աշխարհին, որ Իմ Աստվածային Գթասրտությունը պետք է հասկանալ այնպես, ինչպես այն բացահայտվել է Իմ դուստր Հելենային՝ սուրբ Ֆաուստինային:

Այս առեղծվածը կբացահայտվի, քանի որ բոլորն ականատես կլինեն **Իմ գթասրտության ճառագայթների վերջնական ցուցադրմանը մարդկության փրկության համար:**

Նրանք, ովքեր ծաղրում են քեզ, աղջիկս, և ասում որ այս առեղծվածն արդեն բացահայտվել է աշխարհին, նրանք պետք է իմանան հետևյալը:

Այսօր աշխարհում քանի՞սը գիտեն Աստվածային Գթասրտության Իմ խոստումի մասին: Շատ քչերը, ներառյալ դու, աղջիկս:

Մի՞թե Իմ հետևորդները չգիտեին, որ Ես ետ կգամ՝ նախապատրաստելու համար աշխարհը այս մեծ իրադարձության համար:

Ես միշտ նախապատրաստում եմ Իմ զավակներին այդպիսի իրադարձությունների համար: Իմ Հավիտենական Հայրը մարգարեներ է ուղարկում աշխարհ մեկ նպատակով. Ձեզ համապատասխան նախազգուշացում տալու համար, որպեսզի հոգիները հանկարծակիի չգան: Հաճույքով ընդունեք մարգարեության այս ընծան: Մի մերժեք այն:

Երբեք մի մտածեք, որ ամեն ինչ գիտեք Իմ ուղիների մասին, որովհետև մինչ սիրում եք Ինձ, դուք միշտ չէ, որ ճանաչում եք Ինձ կամ հասկանում Իմ ուղիները:

Ձեզանից յուրաքանչյուրը, ով ծաղրում է Իմ մարգարեներին, հիշեք, որ դուք ծաղրում եք ոչ թե նրանց, այլ՝ Ինձ: Նրանք պարզապես գործիքներ են:

Դուք, զավակներս, երբեք չպետք է ենթադրեք, թե իսկապես ճանաչում եք Ինձ, քանի որ եթե ճանաչեիք, Ինձ չէիք մերժի: **Չնայած դրան, ճիշտ ինչպես Իմ աշակերտներն արեցին, երբ Ես քայլում էի նրանց մեջ, դուք դեռևս մերժում եք, որ այդ Ես եմ, որ նշան եմ տալիս ձեզ դեպի Ինձ գալ:**

Դուք ձեր ձախ ձեռքը տալիս եք Ինձ բռնելու, իսկ աջով ապտակում եք Ինձ:

Մի՞թե դուք հիմա չեք լսում որ Ես խոսում եմ ձեզ հետ: Եթե չեք լսում, ապա հանգիստ նստեք և աղոթեք Ինձ, որպեսզի Ես կարողանամ լցնել ձեր հոգնած սիրտը Իմ Սուրբ Հոգու կրակով:

Ես սիրում եմ ձեզ, և եթե դուք Ինձ թույլ տաք (մտնել) ձեր սրտի մեջ առանց ձեր պողպատյա զենքերի, որոնք փակում են Իմ ճանապարհը, ապա Ես ձեզ ազատ կարձակեմ:

Երբ բացեք ձեր աչքերը և տեսնեք, որ այդ Ես եմ՝ ձեր Աստվածային Փրկիչը որ խոսում եմ ձեզ հետ, ապա հետևեք Ինձ Նոր Դրախտ տանող ճանապարհով՝ սիրով և ուրախությամբ ձեր սրտերի մեջ:

Թույլ մի տվեք չարին կասկածներ սերմանել ձեր մտքի մեջ: Աղոթեք, որ բավականաչափ ուժեղ լինեք, խոնարհ՝ մտքով և ոգով, որ վազեք դեպի Իմ բազուկները:

Միայն այն դեպքում երբ Ինձ մոտ գաք որպես երեխաներ, ճշմարտապես խաղաղություն կգտնեք ձեր հոգու մեջ: Սա է միակ ճանապարհը՝ Ինձ ձեր սրտի մեջ թույլ տալու:

Ձեր սիրող Հիսուս

Կույս Մարիամը աղոթքի և պահեցողության կոչ է անում Նախազգուշացմանը նախապատրաստվելու համար

Երկուշաբթի, 30 հունվարի, 2012թ. ցերեկվա ժ 01:00

Այս պատգամը Մարիա Աստվածային Գթասրտությունը ստացել է Կույս Մարիամի երկու առանձին երևումներից հետո, որոնցից մեկը տեղի է ունեցել հունվարի 29-ի գիշերը, իսկ մյուսը՝ երկուշաբթի, 2012թ հունվարի 30-ին ցերակվա ժամը 13:00, որի ընթացքում Կույս Մարիամը բավականին վշտացած էր:

Զավակս, մինչ Իմ Որդին գալիս է հիմա ծածկելու ողջ աշխարհը Իր Գթասրտության ճառագայթներով, վշտացած սրտով պետք է ասեմ քեզ, որ շատերը կմահանան Նախազգուշացման ընթացքում:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք նրանց հոգիների համար:

Դու, զավակս, պետք է խնդրես այս աստվածային պատգամի բոլոր հետևորդներին, որպեսզի **վաղը՝ 2012թ. հունվարի 31-ը առանձնացնեն որպես աղոթքի հատուկ օր:**

Այդ օրը դուք պետք է աղոթեք Ամենասուրբ Վարդարանը և Աստվածային Գթասրտության աղոթքը:

Հնարավորության դեպքում **բոլորը պետք է փորձեն և պահեցողություն անեն այդ օրը:** Այդ կերպ ավելի շատ հոգիներ, հատկապես մահացու մեղքի մեջ գտնվող, մահվան ժամին կարող են փրկվել Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի գթասրտության միջոցով:

Ես վշտի արցունքներ եմ հեղում այն խեղճ մարդկանց համար, ովքեր գաղափար չունեն, թե որքան տառապանք ու ցավ են իրենց մեղքերը պատճառում Իմ Որդուն:

Ընծայի ուրախությունը, որը հիմա Իմ Որդին բերում է աշխարհին, **տխրության երանգ է ստացել նրանց համար, ովքեր չեն կարող փրկվել իրենց սեփական ընտրությամբ:**

Ստերը, որոնք դուրս կգան և կտարածվեն աշխարհով մեկ Նախազգուշացման տեղի ունենալուց հետո, պետք է կանգնեցվեն ձեր աղոթքների միջոցով:

Աղոթեք, որ ոչ մեկը չմերժի Իմ Որդու Աստվածային Գթասրտությունը Նախազգուշացման ընթացքում կամ դրանից հետո: Քանի որ այդպիսի ստերին տեղիք տված յուրաքանչյուր հոգի կբռնվի չարի կողմից:

Ապաշխարություն տարածեք ամենուր, զավակներս: Ընդունեք, որ Ես Համա-Ազատարարն ու Միջնորդն եմ, որ սերտորեն աշխատում եմ Իմ սիրելի որդի Հիսուս Քրիստոսի հետ բոլոր հոգիներին փրկելու հավիտենական կործանումից:

Իմ սերը ձեր հանդեպ, զավակներս, չափազանց ուժեղ է: Ես գթասրտություն եմ աղերսում յուրաքանչյուր հոգու համար օրվա յուրաքանչյուր վայրկյան՝ խնդրելով Իմ Հորից մեղմություն:

Սակայն զավակներս, դուք պետք է օգնեք միանալով Ինձ աղոթքի և զոհաբերության մեջ՝ օգնելու Աստծո բոլոր զավակներին մտնել Նոր Դրախտի դռներից:

Ձեր Երկնավոր Մայր

Մայր Փրկության

Հիսուսը շնորհում է լիակատար ինդուլգենցիա մեղքերի բացարձակ թողության համար

Երեքշաբթի, 31 հունվարի, 2012թ, երեկոյան ժ 09:30

Այս պատգամը տրվել է Մարիա Աստվածային Գթասրտությանը Սուրբ Հաղորդության մեկ ու կես ժամ տևած պաշտամունքից հետո:

Իմ սիրելի աղջիկ, որքան եմ Ես ուրախանում Իմ թանկագին հետևորդների կողմից Իմ հանդեպ ցույց տրված սիրուց, որոնց սերն այնքան սերտորեն հյուսված է Իմ Սուրբ Սրտին:

Ես հրճվում եմ Իմ հավատարիմ զավակներով, որոնց սերն Իմ հանդեպ Ինձ այնպիսի ուրախություն է պատճառում Իմ ցավերի մեջ:

Նրանք այն լույսն են, որոնք Ինձ բերում են անհրաժեշտ ուժը՝ առաջնորդելու համար Իմ բանակը:

Նրանք, Իմ ընտրյալ զավակները, հավատում են, թե միայն իրենց հավատն էր որ բերեց իրենց Ինձ մոտ:

Նրանք չեն հասկանում այն, որ Իմ Սուրբ Հոգին իջել է իրենց վրա, հատկապես բաց սիրտ ունեցողների, որպեսզի իրենք կարողանան միանալ երկրի վրա Իմ Եկեղեցու մնացորդին:

Նրանք, Իմ սիրելի հետևորդները, ովքեր հնազանդություն են ցույց տալիս, կամք, վճռականություն և մաքուր սեր իրենց հոգիների մեջ, կլինեն այն հիմքը, որի վրա հիմա Ես կվերակառուցեմ Իմ եկեղեցին երկրի վրա:

Իմ բանակին, Իմ հանդեպ ունեցած իրենց սիրով, հիմա կտրվեն շատ յուրահատուկ շնորհներ:

Ես <շեշտված> շնորհում եմ նրանց այս Լիակատար (պլենար) Ինդուլգենցիան, ի վիճակի դարձնելու համար նրանց տանելու կրակի Իմ ջահը, որպեսզի կարողանան ապաշխարություն տարածել:

Իմ կողմից տրված այս ընծան կօգնի նրանց տարածել Իմ Սուրբ Խոսքի ճշմարտությունը, որպեսզի այն դիպչի սրտերին ամենուր, ուր նրանք կգնան:

Նրանք պետք է ասեն այս աղոթքը **յոթ օր շարունակ**, և նրանց կտրվի մեղքերի բացարձակ թողության ընծան և Սուրբ Հոգու զորությունը:

Ով Իմ Հիսուս, Դու երկրի Լույսն ես

Դու այն բոցն ես, որ դիպչում է բոլոր հոգիներին

Քո գթասրտությունն ու սերը սահման չեն ճանաչում

ՄԵնք արժանի չեն այն զոհաբերությանը, որը Դու կատարեցիր խաչի վրա

Սակայն գիտենք, որ մեր հանդեպ Քո սերն ավելի մեծ է, քան այն սերը որը մենք ունենք Քո հանդեպ

Տուր մեզ, ով Տեր, խոնարհության ընծան, որ արժանի լինենք Քո Նոր Թագավորությանը

Լցրու մեզ Սուրբ Հոգով, որ կարողանանք առաջ գնալ և առաջնորդել Քո բանակը

Քո Սուրբ Խոսքի ճշմարտությունը հռչակելու և մեր եղբայրներին ու քույրերին նախապատրաստելու համար

Երկիր վրա Քո Երկրորդ Գալուստի փառքի համար

Մենք պատվում ենք Քեզ

Մենք գովաբանում են Քեզ

Մենք առաջարկում ենք մեր անձը, մեր վշտերը, մեր տառապանքները՝ որպես ընծա Քեզ, հոգիներ փրկելու համար

ՄԵՆՔ սիրում ենք Քեզ, Հիսուս

Գթա Քո բոլոր զավակներին, որտեղ էլ որ նրանք լինեն:

ԱՄԵՆ:

Առաջ գնացեք խաղաղությամբ, Իմ սիրելի հետևորդներ, և հիշեք, որ Իմ հանդեպ ձեր սերը բոցավատում է Իմ Սիրտը և մեծ ուրախություն է պատճառում Իմ Հավիտենական Հորը, Իմ Օրհնյալ Մորը, Երկնքի հրեշտակներին ու բոլոր սրբերին:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Ես սպասում եմ այն պահին, երբ Ես Իմ բազուկների մեջ կգրկեմ ձեզանից յուրաքանչյուրին և ամեն մեկիդ, որպեսզի գտնեք այն խաղաղությունը, սերը և ուրախությունը, որոնց սպասել եք երկրի վրա ձեր ողջ կյանքի ընթացքում:

Ձեր սիրող Հիսուս Քրիստոս